# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 44 (1594) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 2012
VOLUME 32, NO. 44 (1594) SATURDAY, DECEMBER 1, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԹՈՒՐՔ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ԹՈՒՐՔԻԱ ՄԻՆՉԵՒ 2015-Ը ՉԻ ՃԱՆՉՆԱՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Թուրք մտաւորականներու մեծ մասը համոզուած է, որ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին Թուրքիա չընդունիր 1915 թուականին հայերու նկատմամբ իրագործուած ցեղասպանութիւնը:

Հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման ու Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ հայաստանցի լրագրողներու հետ հանդիպումներու ընթացքին, թուրք մտաւորականներու մէկ մասի կարծիքը այն է, որ հայ-թրքական հաշտեցման գլխաւոր խոչընդոտը թրքական կառավարութիւնն է, որ ազգային փոքրամասնութիւններու հարցերու լուծման համար գրեթէ ոչինչ կը ձեռնարկէ:

Թուրք իրաւապաշտպան եւ Մարդու իրաւունքներու ընկերակցութեան ղեկավար Այշէ Գիւնայսուն ըսած է, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը Թուրքիոյ անէծքն է, անոր պատիժը: Իրաւապաշտպանը յայտնած է, որ այս Թուրքիան է, եւ ոչ թէ Եւրոպան, ուր օրինակ, Գերմանիան ընդունեց իր մեղքը հրեաներու նկատմամբ: Թուրքիոյ պարագային ժխտողականութիւնը կ՚արտայայտուի նոյնիսկ հայերու գոյութիւնը ժխտելով: «Կը ջնջեն նոյնիսկ հայոց պատմութեան հարուստ հետքերը»,- աւելցուցած է թուրք իրաւապաշտպանը, ցաւով արձանագրելով, որ ժամանակին մշակոյթով հարուստ Արեւմտեան Հայաստանը այժմ ամայի տարածք մը վերածուած է:

«Թուրքիա չկարողացաւ խաղաղութիւն գտնել: Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւն չկայ», - ըսած է իրաւապաշտպանը շեշտելով, որ արիւնահեղութիւնը կը շարունակուի մինչ օրս, երբ կ՚սպաննուին քիւրտերը:

Թուրք լրագրող Հիլալ Կապլան, որ յայտնի է Հայոց Ցեղասպանութեան մասին իր յօդուածներով, ըսած է, որ Թուրքիոյ մէջ, 90 տարիներու ընթացքին ժողովուրդին սուտ խօսած են: «Ես որպէս լրագրող կ՚աշխատիմ իմ լուման ներդնել այս սուտը շտկելու նպատակով», - ըսած է Կապլան, կարեւորելով այս հարցով հասարակութեան դերը:

«Եթէ չես ընդունիր, որ քու պատմութեան մէջ կան բիծեր, անոնք չեն մաքրուիր: Ես սկսած եմ խօսիլ 1915 թուականին կատարուածի մասին: Թուրքիա պէտք է հասկնայ ու ազատ քննարկէ մեր պատմութեան այս հատուածը», - ըսած է Կապլան:

Լրագրողը ըսած է, որ իր յօդուածներուն համար յաճախ սպառնալիքներ կը ստանայ ազգայնականներու կողմէ: Միաժամանակ, ըստ Կապլանի, երթալով

Շար.ը էջ 4

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ ԱՒԵԼԻ ՔԱՆ 21 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ




Թելեթոնի վերջին վայրկեանները, երբ յայտարարուեցաւ հանգանակութեան վերջնական արդիւնքը

Նոյեմբեր 22-ին, Միացեալ Նահանգներու Գոհաբանութեան օրուայ առթիւ տեղի ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնը, որ սփռուեցաւ Լոս Անճելըսէն եւ արբանեակային հեռատեսիլի եւ Ինթըրնեթի միջոցաւ կարելի եղաւ դիտել ամբողջ աշխարհի տարածքին:

Այս տարուայ թելեթոնի առթիւ հանգանակուեցաւ 21 միլիոն 422 հազար 477 տոլար:

Հրապարակուած գումարը՝ շուրջ 21.5 միլիոն տոլարը գոյացաւ թելեթոնի ընթացքին եւ անկէ առաջ տեղի ունեցած հանգանակութիւններու միջոցաւ: Հանգանակութիւններուն մէջ ներառուած են Հայաստանի, Ղարաբաղի եւ Սփիւռքի տարածքին տեղի ունեցած տարբեր բնոյթի միջոցառումներու ընթացքին հաւաքուած գումարները, որոնց շարքին Նոյեմբեր 8-ին Մոսկուայի մէջ տեղի ունեցած ճաշկերոյթը, Նոյեմբեր 15-18-ը տեղի ունեցած եւրոպական հեռախօսամարաթոնը եւ Նոյեմբեր 22-ի թելեթոնը:

Այս տարուայ հանգանակուած ընդհանուր գումարը պակաս է նախորդ տարուայ գումարէն՝ շուրջ 8 միլիոն տոլարով: 2011-ին նուիրատուութիւններու ընդհանուր գումարը կազմած էր 30 միլիոն տոլար:

Թելեթոնի ընթացքին հանգանակուած գումարը եւս, 5 միլիոն տոլարով պակաս էր նախորդ տարուայ թելեթոնի օրուայ ընթացքի հանգանակուած 12 միլիոն տոլարէն:

Հանգանակուած գումարի ցանկը տեսնել էջ 5-ի վրայ:

## ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՀԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԱՒԱՂՄԱՆ ԴԷՄ

Մարտի 1-ի զոհերու հարազատները մտադիր են դիմել դատարան եւ պատասխանատուութեան կանչել «Հայոց պատմութիւն» համալսարանական դասագրքի հեղինակները, որոնք խեղաթիւրած են 2008 թուականի Մարտի 1-ի իրադարձութիւնները:

Այդ ողբերգական օրուայ 10 զոհերէն Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին պնդած է, թէ դասագրքի հեղինակը՝ Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասեան աղաւաղած է իրականութիւնը: Յովհաննիսեան ըսած է, որ զոհերու հարազատները պիտի խորհրդակցին փաստաբաններու հետ՝ որոշելու համար, թէ ինչպէս հիմնաւորեն հայցը:




«Դա չլսուած բան է, երբ նախաքննութիւնը ընթանում է, իսկ այդ թեման արդէն պատմութեան գիրկն է անցել: Մինասեանն ասում է՝ վերցրել եմ ժամանակաւոր յանձնաժողովից: Անգամ ժամանակաւոր յանձնաժողովի հաշուետուութիւնը, որը նորից օբիեկտիւ չէ, եւ մենք դրա դէմ բողոքարկել ենք ԵԽԽՎ, անգամ այնտեղ այդ աստիճանի սուտ չկայ գրուած, ինչպէս որ գրել է պարոն Մինասեանը հայոց պատմութեան դասագրքում», - վրդովուած պատմած է զոհուածի մայրը՝ շարունակելով. - «Օրինակ, գրել է՝ «երկուստեք հրազէն են օգտագործել»: Ոչ մի ոստիկանական տեղեկատուութեան մէջ, ասենք, յատուկ քննչական ծառայութեան հաշուետուութիւնները, որ իրենք ասում են, քրէական գործում այդ «երկուստեք հրաձգութիւն» բառը չկայ: Այսինքն՝ տեղից խեղաթիւրուած պատմութիւն է, ինքը

Շար.ը էջ 4

## ՊԱՔՈՒՆ ԿՈՉ Կ՛ԸՆԷ ԵՐԵՒԱՆԻՆ՝ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ «ՈՉ ՄԷԿ ԹԻԶ ՀՈՂ» ՍԿԶԲՈՒՆՔԷՆ

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարով յայտարարած է որ, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները ջանքեր կը գործադրեն Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծումը մեռեալ կէտէն շարժելու համար:

«Ցաւոք, համանախագահներու Երեւան կատարած վերջին այցերու արդիւնքները հիմք չեն տար խօսելու դրական թոնաներու մասին: Երեւանը պէտք է հրաժարի «ոչ մէկ թիզ հող, ոչ մէկ քայլ ետ» սկզբունքէն: Ստատուս քոն պէտք է փոխուի: Հակամարտութեան կարգաւորուած չըլլալը կրնայ հանգեցնել իրադարձութիւններու զարգացման՝ անցանկալի հունով»,- ըսած է Մամետեարով:

Մամետեարովի կարծիքով, եթէ հայկական կողմը յայտարարէ, որ կ՚ընդունի համանախագահներու առաջարկները՝ հաստատուած պետութիւնների ղեկավարներու յայտարարութեամբ, ապա եկած է խաղաղ համաձայնագիրը ստորագրելու ժամանակը:

Վստահեցնելով, թէ Ատրպէյճանը պատրաստ է աշխատելու նման համաձայնագրի վրայ, Ազերի նախարարը եզրակացուցած է. - «Անհրաժեշտ է սկսիլ հայկական զօրքերու դուրսբերումը գրաւուած տարածքներէն, որուն կը յաջորդեն բնակցութիւնները մնացեալ բոլոր կէտերուն շուրջ»:

Միւս կողմէ, Նոյեմբեր 28-ին ԵԱՀԿ-ի առաքելութիւնը Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի զինուած ուժերու շփման գիծի վրայ կատարած է դիտարկում, որու ընթացքին զինադադարի խախտումներ չեն արձանագրուած: Սակայն, ԼՂՀ արտաքին գործոց նախարարութեան համաձայն, ատրպէյճանական կողմը ԵԱՀԿ-ի առաքելութիւնը հեռու պահած է յառաջապահ դիրքերէն, որու հետեւանքով դիտարկումը կատարուած է աւելի հեռու տարածութենէ:

# ՆԵՐԿԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԻ ԽՆԴԻՐԸ

*ԱՐԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ*

*Քաղաքական ամէն պահ ունի իր հիմնական խնդիրը, հիմնական իմաստը, հիմնական ձեւն ու մեթոդը:*

*Ինչպէս պայքարի տարբեր ձեւերում, երբ ուժերը կենտրոնանում են ինչ որ մի կէտի, տարածքի, սկզբունքային հարցի վրայ ու խիստ որոշակի ձեւով (ասենք շախմատում ինչ որ դաշտը տիրելու շուրջը, կամ էլ ռազմի դաշտում ինչ որ մի բարձունքի, առաւելութեան տիրելը եւ այլն), այդպէս էլ հայաստանեան քաղաքական պայքարի մէջ միշտ եղել են այդպիսի սկզբունքային, հիմնարար ու հարց լուծող կէտեր, պահեր, դաշտեր:*

*Ներկայ պահին եւս կայ այդպիսի կիզակէտային խնդիր, եւ դա սպասուող նախագահական ընտրութիւններն են:*

*Կիզակէտային հարցի գոյութեան եւ նրա յաղթահարման տեսական ու մեթոտական յաղթահարման ձեւերի խնդիրը հայ քաղաքական մտքի ամենաաղօտ մասն է:*

*Մեր առաջին՝ 1988-ի ընդդիմութիւնն ինքն առանձին քաղաքական խնդիր չէր ձեւակերպել, այլ ուղղակի ռեակտիւ մտայնութեամբ սատարում էր Ղարաբաղ սուբիեկտի յայտը՝ Ատրպէյճան եւ Սովետական իշխանութիւններ սուբիեկտների հանդէպ:*

*Ատրպէյճանն ու կենտկոմը քայլեր էին անում՝ մենք արձագանքում էինք: Յետագայում էլ Ատրպէյճանը սկսեց պատերազմը՝ մենք պաշտպանուեցինք:*

*Եթէ քայլ առ քայլ դիտարկենք անցած 24 տարիները, ապա կը տեսնենք, որ ընդամէնը մի քանի բացառութիւններով, մենք երբեւէ նախաձեռնող չենք եղել, այլ արել ենք միայն ու միայն պարտադրուած քայլեր:*

*Այսօր էլ հայկական ընդդիմութիւնը նոյն մեթոտաբանութեան վրայ է: Իշխանութիւնները որեւէ նախաձեռնող «վատութիւն» են անում, կամ էլ իշխանաւորը մի այլանդակութիւն, յանցանք է գործում, եւ նոր միայն ընդդիմութիւնն ու հանրութիւնն արձագանքում են:*

*Առաջընթաց, կանխարգելիչ, նախաձեռնող քայլերը մեր մտահորիզոնից դուրս են:*

*Զարմանալի է, որ միջպետական ռեակտիւութիւնը (յիշենք հայկական իշխանութիւնների արտաքին եւ ներքին քաղաքական անճարակութիւնների ամէն մի դրուագը՝ վերջին 24 տարիներին) տեղափոխուեց ներհայկական քաղաքական դաշտ, փաստօրէն առանց փոփոխութիւնների:*

*Այստեղ էլ դրութեան տէրը դարձաւ նախաձեռնող տիպը: Եւ քանի որ «կրթուած» քաղաքական այրերի մօտ բացակայում էր նման մօտեցումների նոյնիսկ գիտակցումը, մէջտեղ եկան ու դրութեան տէր դառան ներկայ օլիգարխներն ու ախպերականը:*

*Ընդհանրացնելով եւ փոքր ինչ մոդելաւորելով կարելի է պնդել, որ ներկայ ընդդիմութեան եւ ողջ հանրութեան հիմնական քաղաքական թուլութիւնը դա ռեակտիւ վարքն է: Այսինքն, միայն արձագանքելը եւ ոչ նախաձեռնող լինելը:*

*Գալով ներկայ պահի կիզակէտային՝ նախագահական ընտրութիւնների խնդրին, մտովի յիշենք դրանց պատմութիւնը եւ փիքսենք թէ հիմա ինչ ռեակտիւ մտայնութիւններ կան ասպարէզում:*

*Սկսած 1995-ից բոլոր հայկական ընտրութիւնները կեղծուել են աւելի ու աւելի յստակ, քիչ բռի, եւ աւելի յուսալի մեխանիզմներով: Բայց եւ ամէն սպասուող ընտրութիւնից առաջ ընդդիմութիւնը մէջտեղ է եկել եւ համոզել ընտրողին, թէ ժողովուրդ ջան, էս մի անգամ հաւատացէք՝ մենք յաղթելու ենք, եկէք ինձ ընտրէք:*

*Հանրութիւնն էլ այլ ելք չտեսնելով գնացել է, նորից պարտուել ու շարունակել հեռանալ երկրից:*

*Մի փոքր բացառութիւն կայ 2008-ի հաշուով: Մարդիկ մտածեցին, հաւատացին, որ Լեւոնը գիտի՞ թէ ով-ով է ու կը կարողանայ յաղթահարել իր իսկ բուծած «գործիչներին»: Նրան ներուեցին ընտրագեղծարարի ներգրաւումն ու յաղթանակներ ապահոված գործիչի աղքատացումը: Ներուեց նոյնիսկ մանուէլ-մանուէլ կանչը, եւ յետագայում էլ Մարտի 1-ին տանը նստած՝ գործերին հեռուստացոյցով հետեւելը, բայց անարդիւնք:*

*Ես փոքր յոյս ունեմ, որ ներումների այս շարքով աւարտուելու է մեր կէսդարեայ ազգային մեծ ողբերգութեան՝ Հայաստանի հայաթափման ու հանրութեանը դեգրադացնող այս վայրընթացը:*

*Մենք անցել ենք «խելք հաւաքելու» համար անհրաժեշտ բոլոր դժբախտութիւնների միջով եւ հիմա պահն է եզրակացութիւններ անելու:*

*Ով եւ ինչու է գնում 2013-ի նախագահական ընտրութիւններին՝ որպէս ընդդիմադիր թեկնածու, որպէս այդ թեկնածուի ակտիւ կողմնակից եւ ով՝ որպէս ընտրող:*

*Որո՞նք են սպասելիքները, որն է խաղը եւ ամենակարեւորը՝ ո՞րն է այդ խաղի գինը:*

*Ո՞վ չգիտի, որ ամենագէշ ու զազրելի մեթոդներով կեղծուելու են ընտրութիւնները: Ո՞վ չգիտի, որ կաշառքն ու կեղծիքը գործելու են բոլոր փուլերում՝ կեղծ թեկնածուների առաջադրումից սկսած, վերջացրած ընտրատեղամասում խիստ կարիքաւորներին ու «ըմբոստներին» 5000-ական բաժանելով:*

*Եթէ բոլորս էլ ամէն ինչ գիտենք, ապա էս ի՞նչ ենք անում: Ինչո՞ւ ենք խաղում այս նուաստացուցիչ, ապականող, երկիր ու մարդ աւերող խաղը: Որ ինչ որ մի անարժան մի ամիս իրեն որպէս ֆիգուր պատկերացնի՞: Որ մի կիսատ- պռատի մէկը դրա կողքին որպէս դէմք ֆուֆուայ:*

*Ես հենց սա չեմ կարողանում հասկանալ:*

*Լաւ, «դէմք» կոչուածներն անում են՝ հասկանալի է: Որոշները մեծ փող են սարքում, որոշները նարցիստիկ են, որոշները հրաման են կատարում, մի գուցէ այլ ստոր մոտիւներ էլ կան: Բայց ինչու է մարդկանց 80 տոկոսը, որը հաստատ, էդ 5000-ով, կամ իշխանութեան վերընտրմամբ չի բարգաւաճելու, մասնակցում այս ոճրին:*

*Կարծում եմ, որ հիմնական պատճառը քաղաքագիտական տգիտութիւնն է: Եւ հենց այդ տգիտութիւնն է պատճառը, որ ռեակտիւ վարք ու մտածելակերպ ունենք բոլոր հարցերում:*

*Իսկ ներկայ պահի քաղաքագիտական տգիտութիւնն էլ այն է, որ որպէս ընդդիմադիր չենք հասկանում, որ չի կարելի մարտը վարել ամբողջ ճակատով՝ անտեսելով կիզակէտային դաշտն ու կիզակէտային սկզբունքը:*

*Միայն մէկ անգամ՝ Մաշտոցի պուրակի խնդրում, մարդկանց շատ փոքր խումբը կարողացաւ մեթոդական նոր մօտեցմամբ մտնել խաղադաշտ, եւ իշխանութիւնները տեղի տուեցին, որովհետեւ մեթոդապէս էին անգէն նոր մօտեցմանը:*

*Բայց յաջորդ իսկ պահին*

*Շար.ը էջ 18*

# ՀՀԿ-Ի ԲՐԵԺՆԵՒԸ, ԿԱՄ Ո՞Վ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՄՐՑԱԿԻՑԸ

*ԴԱՒԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ*

*ՀՀԿ նախընտրական քարոզչութիւնը հետզհետէ դառնում է ագրեսիւ եւ յարձակողական: ՀՀԿ պատգամաւոր Խոսրով Յարութիւնեանը դժգոհելով յայտարարել է, թէ Սերժ Սարգսեանը նախագահական ընտրութիւններում մրցակից չունի, թէ՛ Տէր-Պետրոսեանը, թէ՛ Գագիկ Ծառուկեանը, թէ՛ Քոչարեանը իրենց քաղաքական վարկանիշը հարուածի տակ չեն դնի: Նրանք չեն առաջադրուի, եթէ վստահ չլինեն, որ յաղթելու են այդ ընտրապայքարում: Եթէ անգամ յաղթելու հաւանականութիւնը 50/50 լինի, միեւնոյն է, դեռ պիտի մտորեն առաջադրուելու մասին, համոզուած ասել է Յարութիւնեանը: Սեփական թեկնածուին միակ ու անփոխարինելի ներկայացնելու սովետական կարգերից յայտնի այս մեթոդը Հայաստանի իշխանութիւնները շատ վաղուց վերածել են կայուն վերարտադրողական համակարգի: Եթէ խորհրդարանական ընտրութիւններում նոյն համակարգը գործի էր դրւում իշխող կուսակցութիւնը բացառապէս Սերժ Սարգսեանի անձով պայմանաւորելու պարզունակ մեթոդով, ապա այժմ փորձ է արւում նոյն թեզը զարգացնել՝ նա մրցակից չունի փակուղային լոգունգով:*

*Նախ ՀՀԿ-ն վարպետօրէն ԲՀԿ-ից ու նրա առաջնորդ Գագիկ Ծառուկեանից փորձեց կերտել ընդդիմադիր կամ այլընտրանքային թեկնածուի կերպար եւ հասաւ այն բանին, որ քաղաքական դաշտի անորոշ ինտրիգը դառնայ տեւական: Իսկ երբ ինքնավստահութեան պակասը դարձաւ հնարաւոր մրցակիցների գլխաւոր քաղաքական բնորոշումը, ՀՀԿ քարոզչամեքենան սկսեց (միակի ու անփոխարինելիի) մասին կուսակցական դիֆերամբներ ձօնել՝ զուգահեռ զարկ տալով հասարակութեան ինգուբատորային կուսակցականացմանը:*

*Ի դէպ, խիստ խորհրդանշական է, որ նոյն ասուլիսում ԲՀԿ-ի եւ միւս քաղաքական ուժերի կոնսուլտացիները Խոսրով Յարութիւնեանը բնորոշել է Բրեժնեւի ժամանակներից յայտնի անեկդոտով. «Երկար ժամանակ մտածում են, թէ ինչո՞ւ է վագոնը կանգնած եւ առաջ չի գնում: Եւ ահա, ելքը գտնւում է՝ ուժ տալ, ուժ տալ, մինչեւ տպաւորութիւն ստեղծուի, թէ գնացքը շարժւում է...»: Տպաւորութիւն ստեղծելու առումով Խոսրով Յարութիւնեանն, անշուշտ, իրաւացի է, բրեժնեւեան համակարգի արդիականութեան հետ կապուած նրա ակնարկը նոյնպէս աւելորդ չէ. Բայց եթէ Յարութիւնեանը մինչեւ վերջ անկեղծ գտնուելու համարձակութիւն ունենար, ապա կարող էր խոստովանել, թէ ո՞վ է անկախ Հայաստանի Բրեժնեւը: Բնականաբար, եթէ համակարգը կայ, Բրեժնեւը չլինել չի կարող:*

*Պատմութիւնը մէկ անգամ արդէն ապացուցել է, որ բրեժնեւեան համակարգը տանում է փակուղի: Փաստօրէն քսանամեայ անկախութեան պայմաններում Հայաստանի իշխանութիւնների քաղաքական եւ ժողովրդավարական «նուաճումը» այն է, որ գործող նախագահը մրցակից չունի:Եթէ չկայ մրցակից՝նշանակում է չկայ կեանք, չկայ զարգացում, չկայ հեռանկար, չկայ ձգտում: Սա նշանակում է, որ 90-ականներին տարածաշրջանի ժողովրդավարութեան դրօշակակիրն համարուող Հայաստանը գնացել է դեգրադացիայի ճանապարհով եւ այժմ գտնւում է հասարակական- քաղաքական խոր ընկաճխտի մէջ: Միակ յուսադրող պահն այն է, որ իշխանութիւնը այս ամէնը ոչ միայն չի թաքցնում, այլեւ ինքն է խոստովանում:*

*Իրականում Սերժ Սարգսեանը եւ ընդհանրապէս ցանկացած այլ թեկնածու չի կարող մրցակից չունենալ: Այդ մրցակիցը կայ եւ նա դուրս է Տէր-Պետրոսեանը, Գագիկ Ծառուկեանը, Ռոբերտ Քոչարեան տիրոյթից: Մրցակցին պէտք է փնտռել առողջ եւ ազնիւ դատող Հայաստանի քաղաքացիների մէջ, թէ՝ Խոսրով Յարութիւնեանն ու ՀՀԿ-ն այն կարծիքին են, որ այդպիսիք վաղուց այլեւս Հայաստանում չկան:*

*«ՀԱՅԵԼԻ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՏԻԳՐԱՆ ՈՒՐԻԽԱՆԵԱՆ «ՔԱՆԻ ԱՌԿԱՅ ԼԻՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀ, ՄԵՆՔ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ ՎԱՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ»

*Որքան էլ խիստ օրէնսդրութիւն լինի, բայց բացակայի պարկեշտութիւնը, քաղաքական բարի կամքի դրսեւորումը, հաւասար մրցակցութիւնը, առկայ լինի քաղաքական մենաշնորհ, մենք կ՛ունենանք վատ ընտրութիւններ: Նման կարծիք յայտնեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան մամուլի խօսնակ Տիգրան Ուրիխանեանը՝ հասարակական կազմակերպութիւնների կողմից հրաւիրուած «Ընտրական օրէնսգրքի» փոփոխութիւնների թեմայով հանրային քննարկման ժամանակ:*

*«Մենք որեւէ արդիւնք չենք ունենայ ընտրութիւններից, որքան էլ որ օրէնքները լինեն լաւը, իսկ դրանք կատարողները՝ վատը: Ես կը ցանկանամ, որ այդ գիտակցումով մենք առաջնորդուենք նաեւ ընտրական օրէնսգրքում փոփոխութիւններ կատարելիս»,- ասաց ԲՀԿ-ական պատգամաւորը:*

*Անդրադառնալով ՀԿ-ների կողմից ՀՀ «Ընտրական օրէնսգրքում» առաջարկուող փոփոխութիւններին՝ ԲՀԿ մամուլի խօսնակն ասաց, որ կան բազմաթիւ հարցեր, որոնց մէջ կայ ռացիոնալ հատիկ, կան որոշ հարցեր, որոնք անհասկանալի են՝ օրինակ լիազօրութիւնների դադարեցման հետ կապուած, որտեղ բազմաթիւ բացատրութիւնների կարիք կայ:*



**ԲՀԿ մամուլի խօսնակ Տիգրան Ուրիխանեան**

*«Ես ներկայացնում եմ մի քաղաքական ուժ, որը հանդէս է եկել առհասարակ ընտրակարգի փոփոխութեան վերաբերեալ՝ ընտրութիւնների անցկացման հետ եւ այն բոլոր մտահոգութիւնների հետ կապուած, որոնք հնչում են: Ես ինքս բազմիցս խօսել եմ համակարգային բարեփոխումների անհրաժեշտութեան մասին»,- ասաց նա:*

*Խօսքը, թերեւս 100%-անոց համամասնական ընտրակարգին եւ երկրի կառավարման խորհրդարանական կարգին անցում կատարելու մասին է, որի առաջարկով վերջերս հանդէս է եկել ԲՀԿ-ն եւ այդ դրա հետ կապուած քաղաքական խորհրդակցութիւններ են սկսուել տարբեր քաղաքական ուժերի հետ:*

## ՍԱՖԱՐԵԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ «ԱՆԵՐԵՒԱԿԱՅԵԼԻՕՐԷՆ ՈՒՌՃԱՑՈՒԱԾ ԵՆ»

*Երեւանի Աւան համայնքն ու Նոր Նորքի մի մասն ընդգրկող թիւ 1 ընտրատարածքում պատգամաւորութեան ընդդիմադիր թեկնածու Ստեփան Սաֆարեանն ահազանգում է ընտրողների ցուցակների «խայտառակ» վիճակի մասին:*

*Թեկնածուի շտաբը, անցած շաբաթավերջին ոստիկանութիւնից ստանալով թիւ 1 ընտրատարածքի ընտրացուցակները, ուսումնասիրել է եւ հանգել եզրակացութեան, որ դրանք «աներեւակայելիօրէն ուռճացուած են առնուազն 7-8 հազարով»:*

*Սաֆարեանն առանձնացրել է «ռիսկային» առնուազն 904 հասցէներ, որտեղ ընտրողների թիւը սկսւում է 6-ից, հասնում 10-12-ի, որոշ դէպքերում՝ անցնում 24-ից: Մասնաւորապէս, 190 հասցէներում 10-ից աւելի ընտրողներ են գրանցուած, 120 հասցէներում ընտրողների թիւն անցնում է 12-ից: 7 հասցէներում էլ 24-ից աւելի ընտրողներ են գրանցուած:*

*«Մի զարմացէք, բայց կան հասցէներ, որոնց վրայ գրանցուած են 70 չափահաս մարդիկ: Այն, ինչ կատարւում է սեփական տների հատուածում, դա աներեւակայելի է: Մարդիկ կան, որոնք 20 տարուց աւելի բացակայում են երկրից: Նոյն սեփական տան վրայ տեսնում ես տարբեր ազգանուններով ընտանիքների մի կոնգլոմերատ: Հասցէներ կան, որ, օրինակ, չկարողացանք գտնել. սեփական տուն, որի վրայ 25-ից աւելի մարդ է գրանցուել, չէինք կարողանում գտնել, թաղի բնակիչները չէին կարողանում ցոյց տալ նման հասցէ եւ այսպէս շարունակ: Կամ գրուած է «Մոլդովական յարակից», այսինքն չէնքի առաջ ինչ-որ մէկը մի շինութիւն է կառուցել, բայց «յարակիցներում» տասնեակներով մարդիկ են գրանցուած»,- ասաց Սաֆարեանը:*



**Պատգամաւորութեան ընդդիմադիր թեկնածու Ստեփան Սաֆարեան**

*Սաֆարեանի շտաբը մէկ առ մէկ այցելում եւ ստուգում է իրենց կասկածելի թուացող հասցէները, որից յետոյ դրանք կը տրամադրուեն ընտրատեղամասային յանձնաժողովի ընդդիմադիր անդամներին՝ քուէարկութեան օրը այդ հասցէներից ընտրողների հոսքը վերահսկելու համար: Թեկնածուն համոզմունք յայտնեց, որ ցուցակների ուռճացումն ապահովուել է այլ համայնքների ընտրողներին թիւ 1 ընտրատարածքի հասցէների վրայ գրանցելու հաշուին:*

*«Վստահ եմ, որ այլ տեղերից բերուած մարդիկ են: Շատ պարզ է, թէ ինչու են գրանցել. որովհետեւ վստահաբար, իրենք 7-8 հազար ձայն օդից ունեն: Այսինքն տուեալ տարածքում ընտրելու իրաւունք չունեցող մարդիկ կարող են ընտրել: Եթէ մի թեկնածու կարող է ունենալ այդքան ձայն կողքից՝ ոչինչ չանելով, դրան էլ գումարենք այն որոշ ձայները, որ կուսակցական ռեսուրսներով կը գան, մի 4-5 հազար ձայն էլ գնեն, վե՛րջ, ընտրութիւններն աւարտւում են», - ասաց թեկնածուն:*

## ՀԵՌՈՒՍՏԱՑՈՅՑՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ ՓԱԿ ՄՆԱԼ ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԱՄԱՐ

*ՆԺԿ նախագահ Արամ Կարապետեանի համար վաղուց փակ են հայաստանեան հեռուստաընկերութիւնների դռները: «Այո, հեռուստաընկերութիւններն արդէն վաղուց փակ են ինձ համար: Եւ որքան ես գիտեմ՝ ես միակն եմ, որ բոյկոտուած է: «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանի համար էլ են փակել, բայց ինձ համար ամենախիստն է գգուշացուած: Անգամ Ստեփան Դեմիրճեանին հրաւիրել են երբեմն հեռուստաբանավէճի եւ, իմ կարծիքով, նա իրեն բաւականին լաւ է դրսեւորել»:*



**ՆԺԿ նախագահ Արամ Կարապետեան**

*Արամ Կարապետեանը հեռուստաընկերութիւնների՝ կոնկրետ իր անձի նկատմամբ ցուցաբերուած բոյկոտը բացատրում է իր՝ «խիստ արմատական դիրքորոշման, ժողովրդի կարծիքի վրայ ազդելու ունակութեամբ, ժողովրդին յեղափոխականացնելու, ճշմարտութիւնները բացայայտ ասելու համար: Նաեւ՝ պատրաստուած, անկախ մարդու երեւալու արգելանքն է»:*

*Արամ Կարապետեանը վստահ է, որ իրենից վախենում են, որովհետեւ ինքը կաշկանդուած չէ անցեալի մեղքերով ու յանցաւոր կապերով, ուստի առանց վախենալու կարող է ասել ճշմարտութիւնը:*

*Յիշեցնենք, որ Արամ Կարապետեանի առջեւ հեռուստաընկերութիւնների դռները փակուեցին 7 տարի առաջ: Այս հանգամանքը կապւում են Սերժ Սարգսեանի՝ մոսկովեան մի հաւաքում տուած խոստման հետ, որ ինքը կարող է բոլոր հեռուստաընկերութիւնները անհասանելի դարձնել Արամ Կարապետեանի համար: Փաստօրէն, Սերժ Սարգսեանն ասեց եւ արեց:*

## 40 ՏԱՐԻ ԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՈՒԱԶԻ 25 ՏՈԿՈՍՈՎ

*ՄԱԿ-ի՝ վերջերս կատարած մի փորձագիտական վերլուծութեան կանխատեսումներով, 2050 թուականին Հայաստանի բնակչութիւնը նուազելու է 25 տոկոսով: Նոյն աղբիւրի համաձայն, մեր հարեւան Թուրքիայի եւ Ադրբեջանի բնակչութիւնն աճելու է 30-35 տոկոսով: Այս կանխատեսումները մտահոգել են Հայաստանի աշխատաւորական սոցիալիստական կուսակցութեան նախագահ Մովսէս Շահվերդեանին: Վերջինիս համոզմամբ, սրանք կանխատեսումներ են, որ պէտք է անհանգստացնեն նաեւ ՀՀ կառավարութեանը, քաղաքական ուժերին, որպէսզի վերջիններս գգաստանան եւ փորձեն ամէն ինչ անել՝ թոյլ չտալու համար սոյն կանխատեսման իրականութեան վերածուելը:*

*«Եթէ ՀՀ-ն թուլանում է, արտագաղթը շարունակւում է, թուլանում է ոչ միայն Հայաստանը, պետութիւնը, այլեւ ողջ աշխարհում հայութեան դիրքերն են թուլանում»,- ասում է մեր զրուցակիցը՝ մատնացոյց անելով ՀՀ կառավարութեան գործունէութիւնը: «Խօսում են միջին ու մանր բիզնեսի խթանման մասին. բայց միայն այն դէպքում, երբ մարդը ցանկանում է անհատ ձեռներէցութեամբ զբաղուել, դեռ ոչինչ չարած, ոչինչ չստացած, ամսեկան 5000 դրամ սոցվճար պիտի կատարի: Եթէ մարդը դեռ շահոյթ չի ստացել, որտեղի՞ց այդ գումարը վճարի»:*

*Այս իմաստով, մեր զրուցակիցը գտնում է, որ առաջիկայ ընտրութիւններում գործող կառավարութիւնը պէտք է պատասխան տա իր արածների եւ չարածների համար:*

## «ՆԱԻՐԻՏ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՉԵՆ ՍՏԱՑԵԼ ԻՐԵՆՑ 11 ԱՄՍՈՒԱՅ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

*«Նաիրիտ» քիմիական գործարանի հարիւրաւոր աշխատողներ իրենց 11 ամսուայ աշխատավարձը վճարելու եւ գործարանը վերագործարկելու պահանջով բողոքի ցոյց էին կազմակերպել նախագահական նստավայրի առջեւ:*

*Մարդիկ բողոքում էին, որ չեն կարողանում հոգալ իրենց կենցաղային ծախսերը եւ առհասարակ օդից կախուած վիճակում են:*

*«Ոչ մի տեղ չես կարող աշխատանքի ընդունուել, քանի որ աշխատում ես, պիտի ասեն, փաստաթուղթ բեր, իսկ դու գրանցուած ես գործարանի վրայ: Մեզ ասում են՝ սպասէք, սպասէք», - ասում էր գործարանի աշխատակիցներից մէկը:*

*«Մեր գործարանի ղեկավարութիւնը ստանում է այնպիսի փողեր, որ մի անգամ ստանան, իրենց ամբողջ տարին հերիք է: Բայց մենք ստանում ենք կոպեկներ», - ասում էր մէկ ուրիշը:*

*«Նաիրիտ» գործարանի արհմիութեան նախագահ Հրաչ Թադեւոսեանի՝ նախագահի վերահսկողական ծառայութեան պետ Յովհաննէս Յովսէփեանի ունեցած հանդիպումից յետոյ պարզ դարձաւ, որ մինչեւ Դեկտեմբերի 20-ը կը վճարուի միայն «Նաիրիտ»-ի աշխատողների 2 ամսուայ աշխատավարձը, իսկ գործարանի հետագայ ճակատագրի հետ կապուած հարցն այդպէս էլ չլուծուեց, ինչը մեծ վրդովմունք առաջացրեց հաւաքների մօտ:*

*«Լրիւ խաբէութիւն է, երկու տարի առաջ էլ էինք հաւաքուել ստեղ, ի՞նչ փոխուեց», - ասում էին նրանք:*

*Թադեւոսեանի փոխանցմամբ՝ ամբողջ պարտք կը մարուի այն ժամանակ, երբ «Նաիրիտ»-ը կունենայ սեփականատէր:*

# ԼՈՒՐԵՐ

## ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԿՐԿԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ «ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ


Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան

Հայաստանի վարչապետը կրկին քննադատել է Ռուսաստանի Դաշնութեան միգրացիոն ծառայութիւնների կողմից իրականացուող «Հայրենակիցներ» ծրագիրը:

Ռուսաստանեան «Իզվեստիա» թերթին տուած հարցազրոյցում Տիգրան Սարգսեանը, մասնաւորապէս, նշում է. - «Ժողովրդագրական խնդիրն առանց այդ էլ առկայ է, բնակչութեան արտահոսքը յատկապէս սահմանամերձ գօտուց կը հարուածի Հայաստանի շահերին: Այդ իսկ պատճառով, մեր ռազմավարական դաշնակիցը չպէտք է դիմի քայլերի, որոնք կը վնասեն մեր շահերին: Մենք յստակօրէն ամրագրել ենք մեր այս յստակ ու աներկբայ տեսակէտը բոլոր արձանագրութիւններում»:

Միաժամանակ, Հայաստանի վարչապետը բաւական դրական կարծիք է յայտնել Ռուսաստանի հովանու ներքոյ ընթացող միւս նախագծերի մասին:

«Մենք հետաքրքրուած ենք ԵւրազԷՍ-ի եւ ԱՊՀ-ի շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացներով», - ասում է Սարգսեանը:

Հայաստանի կառավարութեան ղեկավարի խօսքով՝ պաշտօնական Երեւանը այսօր փորձում է համադրել ԱՊՀ-ի անդամների միջեւ իրականացուող նախագծերն ու Եւրամիութեան հետ համագործակցութիւնը: Իր տեսակէտը թերեւս աւելի համոզիչ դարձնելու համար՝ Տիգրան Սարգսեանն «Իզվեստիա»-ին տուած հարցազրոյցում անգամ մէջբերում է Ռուսաստանի նախագահի խօսքերը. - «Ռուսաստան - Եւրամիութիւն համաժողովի ընթացքում Վլադիմիր Պուտինը յստակ ձեւակերպում տուեց, որին մենք եւս հետեւում ենք: Դրա համաձայն՝ [ինտեգրացիոն] գործընթացները չի կարելի հակադրել, դրանք պէտք է փոխադարձաբար լրացնեն միմեանց»: Սարգսեանի խօսքերով՝ Պուտինի արտայայտած այդ տեսակէտը «համահունչ է այն սկզբունքներին, որոնք մեր մօտեցումների հիմքում են»:

Ինչ վերաբերում է Եւրամիութիւն - Հայաստան համագործակցութեանը, ապա, ըստ Տիգրան Սարգսեանի, Հայաստանի ղեկավարութիւնը յստակ պատկերացում ունի հետագայ քայլերի վերաբերեալ. - «Այսօրուայ մեր առաջնահերթութիւնը Եւրամիութեան հետ ազատ առեւտրի համապարփակ գօտու ստեղծման համաձայնագրի ստորագրումն է: Մենք ցանկանում ենք այդ համաձայնագիրը կնքել 2013-ին, թէեւ մեր եւրոպացի գործընկերները կարծում են, որ դա հնարաւոր կը լինի իրագործել միայն 2014 թուականին»:

«Իզվեստիա»-ի թղթակիցը փորձել է պարզել Հայաստանի վարչապետի տեսակէտը ԱՊՀ-ի տարածքում գործող Մաքսային միութեան հանդէպ: «Հայաստանը մի առանձնայատկութիւն ունի՝ մեր երկիրը Մաքսային միութեան հետ ընդհանուր սահման չունի, այդ իսկ պատճառով, հարկաւոր է համագործակցութեան մեխանիզմներ մշակել», - նշել է վարչապետ Սարգսեան:

## Ս. ՍԱՐԳՍԵԱՆ.- «ՍԻՐԻԱՅԻ ՑԱՒԸ՝ ՄԵՐ ՑԱՒՆ Է»



Սերժ Սարգսեան եւ Միշէլ Սուլէյման համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին

Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը Երկուշաբթի, Նոյեմբեր 26-ին պաշտօնական այցով ժամանել է Լիբանան:

Լիբանանի Նախագահի նստավայրում Հայաստանի Նախագահի դիմաւորման պաշտօնական արարողութիւնից յետոյ մեկնարկել են Նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Միշէլ Սուլէյմանի երկկողմ, ապա երկու երկրների պատուիրակութիւնների մասնակցութեամբ՝ ընդլայնուած կազմով բանակցութիւնները:

Հայաստանի Նախագահի պաշտօնական կայքէջի փոխանցմամբ՝ բանակցութիւնների աւարտին տեղի է ունեցել փաստաթղթերի ստորագրման արարողութիւն: Մասնաւորապէս, ստորագրուել են «Դիւանագիտական եւ ծառայողական անձնագրերով առանց մուտքի արտօնագրի միմեանց տարածքներ այցելելու մասին», «Բարձրագոյն կրթութեան եւ ակադեմիական աստիճանների վկայագրերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրերը:

Փաստաթղթերի ստորագրման արարողութիւնից յետոյ Սերժ Սարգսեանը Նախագահական այգում ծառ է տնկել՝ ի նշան Հայաստանի եւ Լիբանանի բարեկամութեան:

Լիբանանի Նախագահի նստավայրում Սերժ Սարգսեանը եւ Միշէլ Սուլէյմանը բանակցութիւնների արդիւնքներն ամփոփել են համատեղ մամուլի ասուլիսում:

Ասուլիսի ժամանակ իր յայտարարութիւնում Հայաստանի Նախագահը ասել է, մասնաւորապէս, որ երկու երկրների միջեւ հաստատուած է բարձր մակարդակի երկխօսութիւն, առկայ են բարձր մակարդակի յարաբերութիւններ եւ այդ յարաբերութիւնները զարգացնելու ցանկութիւն:

«Խիստ մտահոգուած ենք Սիրիայում տիրող իրավիճակով եւ այնտեղ ապրող մեր հայրենակիցների ճակատագրով: Սիրիայի ժողովուրդը հայերիս համար ամենածանր պահին գրկաբաց ընդունել է հարիւր հազարաւոր հայերի, եւ Սիրիայի ցաւը՝ մեր ցաւն է», - ընդգծել է Սերժ Սարգսեանը: - «Հայաստանը մշտապէս հանդէս է եկել արիւնահեղութեան դադարեցման դիրքերից: Մենք դէմ ենք ուժի եւ բռնութիւնների կիրառմանը՝ եւ ոչ միայն Սիրիայում: Անհնար է տեւական լուծման հասնել առանց բոլորի կողմից ընդհարումների դադարեցման եւ առանց ընդգրկուն քաղաքական երկխօսութեան՝ հաշուի առնելով բոլոր սիրիացիների շահերը»:

Հայաստանը, ըստ երկրի Նախագահի, ողջունում է ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարի եւ Արաբական լիգայի յատուկ բանագնաց Լախդար Բրահիմիի առաքելութիւնը՝ սիրիական ներքաղաքական իրավիճակի կայունացման եւ խաղաղութեան հաստատման ուղղութեամբ: «Լիայոյս ենք, որ վերոյիշեալ նախաձեռնութիւնների կեանքի կոչման արդիւնքում Սիրիայում կը հաստատուի խաղաղութիւն, իսկ մօտ ապագայում հնարաւոր կը լինի իրականացնել այն անհրաժեշտ ժողովրդավարական բարեփոխումները, որոնք կարտացոլեն սիրիական ժողովրդի բոլոր հատուածների հաւաքական կամքն ու իղձերը», - ասել է Սերժ Սարգսեանը:

Լիբանան պաշտօնական այցի շրջանակներում Սերժ Սարգսեանը հանդիպում է ունեցել նաեւ երկրի վարչապետ Նաջիբ Միկաթիի հետ: Մինչ այդ, Նախագահն այցելել է Պէյրութի Նահատակների հրապարակ, յարգանքի տուրք մատուցել եւ ծաղկեպսակ դրել յուշարձանին:

## ԹՈՒՐՔ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ

Շարունակուած էջ 1-էն

աւելի շատ մարդիկ կը գործածեն «ցեղասպանութիւն» բառը, այդ եզրը կը հնչէ հեռատեսիլի ծրագիրներու ընթացքին եւ կը գրուի թերթերու մէջ:

Կապլան օրինակ տալով յիշած է Հայոց Ցեղասպանութեան նուիրուած Հասան Ջէմալի գիրքը՝ «1915 Թուականի Ցեղասպանութիւն» վերնագրով: Ան յայտնած է, որ այդ գիրքի լոյս ընծայումը մեծ նորութիւն չէր Թուրք հասարակութեան համար:

Լրագրողը կը կարծէ, որ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի մահը թոյլ տուաւ պատմութեան՝ աւելի արագ շարժելուն: Տինքի մահէն առաջ մարդիկ կը վախնային նոյնիսկ օգտագործել «ցեղասպանութիւն» բառը, բայց Տինքի մահէն ետք, երեք տարուայ ընթացքին ցեղասպանութեան հարցի շուրջ ցոյցեր տեղի կ՚ունենան Իսթանպուլի կեդրոնը:

«Հիւրրիյէթ» թերթի խմբագիր Բարչըն Եինանչ իր կարգին յայտնած է, որ հայ-թրքական հաշտեցում մօտ ապագային տեղի չունենար, քանի որ այն պայմանաւորուած է Թուրքիոյ մէջ սպասուող նախագահական ընտրութիւններով: Վարչապետ Ռեջէփ Էրտողան մտադիր է առաջադրուելու 2014 թուականի նախագահական ընտրութիւններուն:

«Որպէսզի համոզիչ յաղթանակ տանի, ան հիմա ազգայնականներու հետ սիրախաղով զբաղած է եւ զիջում չի կատարեր, քանի որ ազգայնականներու կողմէ շատ վատ կ՚ընկալուի», - դիտել տուած է լրագրողը:

## ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՀԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

վերցրել է մի հատ էլ, Բաղրամեան 26-ին դուռ գալու համար, աւելի խեղաթիւրել է եւ որպէս պատմութիւն ներկայացնում է սերունդներին»:

«Ես կարծում եմ, որ ինքը հրապարակաւ պէտք է ներողութիւն խնդրի առաջինը զոհերի ծնողներից: Ինքը չի՞ հասկանում, որ զոհերը ծնողներ ունեն, որ ծնողները ամէն ինչին հետեւում են: Ծնողներով պարտադիր պէտք է դատարան քարշ տանք այդ դասագիրքը գրողներին: Պատասխանատուները պէտք է դատարանում պատասխանատուութեան ենթարկուեն», - յայտարարեց Ալլա Յովհաննիսեան:

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save
Support
Sustain
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948
www.syrianarmenianrelieffund.org

## «ԱՍՊԵՏ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ» ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆԻՆ

*ԱՄՆ Արեւելեան հայոց թեմ կատարած հայրապետական այցի ընթացքում, նոյեմբերի 22-ին՝ Գոհաբանութեան օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ազգային բարերար տիկին Լուիզ Մանուկեան Սիմոնին յանձնեց 2011թ. Փետրուարին նրան շնորհուած «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական շքանշանը՝ Հայրենիքին, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցուն եւ աշխարհասփիւռ հայ ժողովրդին մատուցած բացառիկ ծառայութիւնների համար:*

*Ամենայն Հայոց Հայրապետը բարձր է գնահատել տիկին Լուիզ Մանուկեան Սիմոնի աւանդը ազգային եւ եկեղեցական կեանքում: Մեծագնիւ բարերարը դուստրն է ազգանուէր ու եկեղեցասէր ծնողների՝ ՀՀ ազգային հերոս եւ ՀԲԸՄ ցմահ նախագահ, հոգելոյս տիար Ալեք Մանուկեանի եւ տիկին Մարի Մանուկեանի: Տիկին Լ. Մանուկեան Սիմոնը, իբրեւ ՀԲԸՄ նախագահ, սատար է կանգնել Հայրենիքին ինչպէս Խորհրդային, այնպէս եւ ՀՀ անկախութեան տարիներին: Յատկապէս մեծ է նրա ցուցաբերած զօրակցութիւնը նորանկախ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին: Նրա ակնառու նախաձեռնութիւնների շարքին է պատկանում Ամերիկեան համալսարանի ստեղծումը Հայաստանում:*

*Բազմամեայ իր ծառայութեան ընթացքում ՀԲԸՄ նախագահը մշտապէս զօրավիգ է եղել նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Հայոց Եկեղեցուն: Նրա պաշտօնավարման ընթացքում սկիզբ առան եւ յաջողշարունակում են իրենց գործունէութիւնը Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ համատեղ կրթական եւ սոցիալական ձեռնարկները Հայաստանում՝ Հայորդեացտների եւ բարեգործական ճաշարանների ծրագրերը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին փոխանցուեց «Ս. Ներսէս Մեծ» բժշկական կենտրոնը: Մեծագնիւ բարերարի ջանքերով Մանուկեան ընտանիքի կողմից հաստատուեց Մայր Աթոռի Միածնաէջ Ս. Տաճարի պահպանութեան հիմնադրամ, նաեւ նորոգուեց Մայր Տաճարը, բարեզարդուեց Մայր Աթոռի տարածքը, կառուցուեցին միաբանական եւ վարչատնտեսական շէնքերը: Նրա իշխանավայել ընծայաբերումներով, Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի առիթով, կառուցուեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին, Մալաթիա-Սեբաստիա համայնքում վերխոյացաւ Ս. Երրորդութիւն հոյակերտ եկեղեցին, աւարտին է մօտենում Արաբկիրի վարչական շրջանի եկեղեցու շինարարութիւնը:*

*Տիկին Լուիզ Մանուկեան Սիմոնն այսօր էլ սրտաբուխ առատաձեռն նուիրատուութիւններով շարուն ակում է զօրավիգ լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելութեանը եւ Ամենայն Հայոց Հայրապետին՝ վկայելով իր հաւատը, սէրն ու հաւատարմութիւնը ազգի, Եկեղեցու եւ Հայրենիքի հանդէպ:*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ Ի ՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ստորեւ՝ հանգանակուած գումարները ըստ երկիրներու: Յայտնենք, որ Լիբանանի դրամահաւաքի միջոցառումը տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 8-ին:

| | |
|---|---|
| Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ | 2,500.000 |
| Ռուսաստան | 12,100.000 |
| Ֆրանսա | 2,196.239 |
| Գերմանիա | 122,438 |
| Հոլանտա | 58,600 |
| Զուիցերիա | 31,800 |
| Պելճիքա | 10,200 |
| Յունաստան | 38,200 |
| Իտալիա | 50,000 |
| Միացեալ Նահանգներ Արեւելեան ափ | 600,000 |
| Միացեալ Նահանգներ Արեւմտեան ափ | 1,500.000 |
| Արժանթին | 700,000 |
| Պրազիլ | 100,000 |
| Գանատա-Թորոնթօ | 500,000 |
| Գանատա-Մոնթրէա | 125,000 |
| Մեծն Բրիտանիա | 170,000 |
| Հնդկաստան | 600,000 |
| Իրան | 15,000 |
| Քուէյթ | 5000 |
| Ընդհանուր գումար | 21,422.477 |

## ԵԱՍԵՐ ԱՐԱՖԱԹԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԲԱՑՈՒԵՑԱՒ ԱՆՈՐ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌԸ ՊԻՏԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒԻ

*Բաւական խորհրդաւոր պայմաններու մէջ է որ Պաղեստինի Ազատագրական Կազմակերպութեան ղեկավար Եասէր Արաֆաթ յանկարծ հիւանդացած ու շուտով ալ իր կեանքը կորսնցուցած էր: Այժմ կը պնդուի թէ այդ շրջանին Իսրայէլի կողմէ դաւադրութիւն մը սարքուած էր անոր դէմ եւ Արաֆաթ ուղղակի սպաննուած էր: Ներկայիս կը պահանջուի դիակը լրջօրէն վերազննել, իմանալու համար թէ Արաֆաթ ինչէ՞ն մահացած էր:*

*Այս նպատակով էր որ օրերս Արաֆաթի գերեզմանը բացուեցաւ եւ քննիչ յանձնախումբի մը կողմէ իր դիակը քննութեան պիտի ենթարկուի, ապա վերստին պիտի դրուի իր գերեզմանը: Քննութեան յանձնախումբի նախագահ Թուֆիք Էլ Թայրաուին ըսաւ թէ իր ձեռքին ունի կարգ մը փաստեր, Իսրայէլի կողմէ կազմակերպուած դաւադրութեան մը մասին: Նշենք նաեւ որ Արաֆաթին մարմինը քննող յանձնախումբին մաս կը կազմեն ֆրանսայէն, Զուիցերիայէն եւ Ռուսաստանէն ժամանած մասնագէտներ:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 69-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ



*Լիբանանի աւագ հիւպատոս Ճօնի Իպրահիմ եւ ՍԴՀԿ-ի ներկայացուցիչները իրենց տիկիններով*

*Լոս Անճելըսի մօտ Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը անցեալ Շաբաթ, Նոյեմբեր 24ին, 2012, շքեղ ընդունելութիւն մը կազմակերպած էր, Պէվըրլի Հիլզի «Ռիվիերա Քաունթի գլապ»ի մէջ, Լիբանանի անկախութեան 69րդ տարեդարձին առթիւ:*

*Հարաւային Գալիֆորնիոյ տարբեր շրջաններէն ժամանած հիւրերուն մէջ կը նշմարուէին պետական կառոյցներու ներկայացուցիչներ, Շէրիֆ Լի Պաքայի փոխանորդը՝ շէրիֆ Կէրի Նալպանտեան, հայ եւ արաբ յարանուանութիւններու եւ քաղաքական կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, տարբեր քաղաքներու քաղաքապետներ եւ խուռներամ բազմութիւն մը:*

*ԱՄՆ-ի եւ Լիբանանի քայլերգներու ունկնդրութենէն ետք կազմակերպիչ յանձնախումբին անունով ներկաները ողջունեց Գարիմ Ապու Ժաուտէ եւ անկախութեան տարեդարձին առիթով խաղաղութիւն եւ բարգաւաճ կեանք մաղթեց գեղածիծաղ ու ասպնջական Լիբանանին:*

*Նորանշանակ աւագ հիւպատոս Ճօնի Իպրահիմ, ողջունելէ ետք անկախութեան 69րդ տարեդարձը, դրուատեց Լիբանանի Բարեմասնութիւնները որպէս գիրերու գիւտի բնօրրան եւ տարբեր քաղաքակրթութիւններու ու մշակոյթներու կեդրոն: Արդարեւ, Մեծն Աղեքսանդր աշխարհակալը՝ Սուր քաղաքի դարպասներուն առջեւ լացած է դառնօրէն, այս քաղաքը չի կարենալ տեսնելու համար...:*

*19րդ դարէն սկսեալ լիբանանցիք սկսան գաղթել դէպի այս հիւրընկալ ափերը: Անոնք ընտելանալով հանդերձ ա յս երկրի օրէնքներուն, չեն մոռցած իրենց ծննդավայրն ու աւանդութիւնները եւ հիմնած նոր միութիւններ, նեցուկ կանգնելու մայրիներու աշխարհին: Արդարեւ, որպէս նոր քաղաքացիներ այս երկրին մեր հայրենակիցները պատուաբեր դիրքերու հասած են կեանքի տարբեր բնագաւառներու մէջ: «Գիտակից լիբանանցիները իրենց քաղաքացիական պարտաւորութիւնները պէտք է կատարեն նաեւ մեր հիւպատոսարանին միջոցով, իրենց մասնակցութիւնը բերելով յառաջիկայ տարի տեղի ունենալիք Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն» յարեց հիւպատոսը:*

## ԲՈՒՌՆ ՑՈՅՑԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՆԱԽԱԳԱՀ ՄՈՒՐՍԻԻ ԴԷՄ



*Եգիպտոսի հանրապետութեան նախագահ Մուհամմատ Մուրսի, վերջերս նախագահական հրամանագրով մը, կը յայտարարէր թէ առաւել իրաւասութիւններ տուած է իր անձին: Այս միակողմանի որոշումը մեծ իրարանցում ստեղծեց երկրի յառաջդիմական կազմակերպութիւններու եւ ժողովրդային լայն շրջանակներու մօտ: Այս երեւոյթը նկատուեցաւ մենատիրական քայլ մը դէպի միապետութիւն: Արդարեւ, բողոքի մեծ ցոյցեր յառաջացան երկրի մեծ քաղաքներուն մէջ, Գահիրէ, Աղեքսանդրիա, Բոր Սայիտ, Թանթա, եւայլն:*

*Նոր հրամանագրի պատճառով յառաջացած տագնապը լուծելու համար, Նախագահ Մուրսին սկսաւ խորհրդակցութիւններ կատարել երկրի բարձրաստիճան կարգ մը դատաւորներու հետ: Բայց այս վերջիններն ալ իրենց հերթին ունին որոշ վերապահութիւններ Նոր հրամանագրին մէջ նշուած արտակարգ լիազօրութիւններու մասին: Այս առթիւ Եգիպտոսի վերջին դէպքերուն պատճառով երկրի սակարանը զգալի անկում արձանագրեց:*

## «ՏԱՆԳՕ»ՆԵՐԸ ԹԱՆԿՕ ԿԸ ՊԱՐԵՆ...



ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Վերջերս, ներ-հայաստանեան կեանքի աղմկայարոյց եղելութիւններէն մէկը Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան շէնքին վաճառքն էր «Տանգօ» ընկերութեան: Ընկերութիւնը նպատակ ունի այդ կառոյցը վերածելու հինգաստղանի հիւրանոցի: Շէնքը կը գտնուի հանճարեղ ճարտարապետ Ալեքսանդր Թամանեանի ստեղծագործած Երեւանի Հանրապետութեան (Նախկին Վ. Ի. Լենինի անուան) հրապարակին վրայ: Արդարեւ, հոյակերտ հրապարակին մէկ բաղկացուցիչ մասն է այդ, որ միաժամանակ Հայաստանի պետականութեան խորհրդանիշներէն է՝ որպէս անոր արտաքին քաղաքականութիւնը ուղղորդող ու դարբնող կառոյց:

Այս գործարք-վաճառքին շուրջ ծաւալած ընդվզումը ունեցաւ երկու ուղղութիւն.- ճարտարապետական եւ բարոյական:

Հայրենի ճարտարապետներուն մէկ մասը մտավախութիւն յայտնեց, որ Ա. Թամանեանի փայլուն երեւակայութեան արգասիքը եղող գեղակերտ այդ շինութիւնը կրնայ պղծուիլ. խաթարել հրապարակին համընդհանուր չքեղութիւնն ու տպաւորիչ արտաքինը. ստուերել «արեւային քաղաք»ին աշխարհահռչակ հրապարակին համբաւը: Այս մտավախութիւնը փարատեցաւ, երբ կառավարութեան ներկայացուցիչներ եւ «Տանգօ» ընկերութեան պատասխանատուներ հաւաստեցին, թէ շինութեան արտաքինը ոչ մէկ փոփոխութեան պիտի ենթարկուի, պիտի պահպանէ իր տեսքը՝ ինչպէս որ է:

Գալով բարոյական կողմին, մարդիկ հարց բարձրացուցին, թէ ինչպէ՞ս պետականութեան խորհրդանիշ հանդիսացող, ազգային-քաղաքական աւանդոյթներ ունեցող, դիւանագիտական դրուագներով հարուստ ճանապարհ անցած եւ վերջապէս ազգային-պետական որոշումներու եւ ինքնուրոյնութեան վկայարան եղող շէնք մը զոհ կ'երթայ նիւթական անյագուրդ ախորժակներու. թէ ինչպէ՞ս եւ մինչեւ ե՞րբ բարոյականն ու ազգայինը պիտի կքին նիւթին ու մամոնային դիմաց. մինչեւ ե՞րբ ամենազօր դրամը, ցանկացած որոշման պարագային, պիտի ըլլայ վճռորոշ դերակատարը՝ ոտնակոխ ընելով ազգային, պետական ու բարոյական սրբութիւններ:

Իրօք, կրնա՞ք պատկերացնել Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան շէնքը, ուր կնքուած են միջ-պետական յոյժ կարեւոր համաձայնագրեր, կատարուած քաղաքական վճռորոշ հանդիպումներ, կայացած մամլոյ ասուլիսներ, հանդիպած միջազգային եւ շրջանային արտաքին գերատեսչութիւններու ղեկավարներ, ուր դաստիարակուած ու կոփուած են դիւանագէտներու փաղանգներ, դեսպաններ ու հիւպատոսներ, կցորդներ ու աշխատակիցներ, դառնայ հիւրանոց մը, որուն սենեակները ականատես պիտի ըլլան գեղխութեան ու ցոփութեան դիոնիսոսեան խելացնոր գիշերներու, զուարճանքներու եւ գինարբուքներուն հետեւող մոլեգնութեան. վայր մը՝ ուր պիտի յաճախեն ու թուչկոտին Երեւանի «գիշերային թիթեռնիկներ»ը՝ յագուրդ տալու թուրք ու պարսիկ տարփակէզ զբօսաշրջիկներու, պիտի ծառայեն Երեւան ժամանած հեշտասէրներու, պիտի սպասարկեն օտարազգի կրքոտ այցելուներու:

Շար.ը էջ 20

## ՄԻՇՏ ՍՈՒՐԻՈՅ ԿՈՂՔԻՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ

Կիրակի օր, Նոյեմբեր 18-ին, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, պատարագեց ու քարոզեց Սուրիոյ Դամասկոսի Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Արմաշ Եպսկ. Նալպանտեանը: Սրբազան հայրը յուզիչ եւ իմաստալից քարոզով կոչ ուղղեց՝ «Աղօթել Սուրիոյ համար, որ եղած է սփիւռքահայ մեր նահատակ ժողովուրդի առաջին գաղթակայանը, եւ կը մնայ մեր գաղթական կեանքի ամենահինն ու ամենէն նշանակելի (Symbolic) վայրը»:

Սրբազան հայրը խոհեմ եւ իմաստուն ուղեցոյց հանդիսացաւ իր յորդորով երբ ըսաւ՝«Բոլոր հայերս պէտք է ԴԻՐՔ ԲՌՆԵՆՔ ՍՈՒՐԻՈՅ ԿՈՂՔԻՆ եւ աղօթենք, որ այդ հայու բարեկամ երկրին մէջ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ տիրէ: Ան նշանակելի եւ գնահատելի ակնարկ մը ըրաւ, յիշելով իր հոգեղբայր՝ Հալէպի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Շահան Եպսկ. Սարգիսեանի հետ ունեցած իր գործակցութիւնը, եղբայրական աշխատանքի մթնոլորտի մէջ դնելով Էջմիածնի եւ Անթիլիասի Թեմերու ազգային օգնութիւն եւ ծառայութիւն ընծայող բոլոր կարելիութիւնները»:

Սուրիոյ կողքին ըլլալը կը նշանակէ կռուող կողմերէն մէկուն հետ ըլլալու քաղաքական մեկնաբանութիւն ընելով ԿՈՂՄ ՉԲՌՆԵՆՔ, սեփական, միութենական, կուսակցական կամ փոքրամասնական շահերէ մեկնած կամ դրդուած, այլ ըլլանք Վիրաւոր Սուրիոյ կողքին օգնութիւն երկարող ձեռքը, որդեգրենք դրական չէզոքութիւն, ճիշդ այնպէս ինչպէս լիբանանահայութիւնը չէզոք դիրք բռնեց տարիներ առաջ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին: Սրբազան հայրը օգնութիւն չխնդրեց, այլ արդար իրաւունքի տէր որպէս պահանջեց մեր բոլորէն որ տէր կանգնինք Սուրիահայութեան, նիւթապէս եւ բարոյապէս, որպէսզի ան շարունակէ մնալ պահակն ու պահապանը մեր նահատակաց յուշահամալիր նկատուող Տէր-Զօրին, որպէսզի ան մնայ մեր խաչեցեալ «Մանկութիւն Չունեցող Մարդոց» թոռներուն եւ ծոռներուն ուխտավայրի համադրիչը, եւ որպէսզի ան մնայ հայ սփիւռքի մէջ ազգային շունչ, սիրտ եւ հոգի դաւանող եւ դաստիարակող ուսուցիչն ու դաստուն:

Սուրիոյ հայութիւնը կ'ապրի այսօր ողբալի վիճակ մը որ մեզ կը յիշեցնէ այն ողբալի կեանքը որ ապրեցաւ Լիբանանի հայութիւնը ամբողջ տասնըհինգ տարի Լիբանանի քաղաքացիական պատերազմի շրջանին ( 1975-1990), երբ հայ գործատեղիներ աւերուեցան, հայ ապագաներ խորտակուեցան, հայ ընտանիքներ բաժան-բաժան դարձան, բռնելով արտագաղթի ճամբան:

Սուրիան մտած ըլլալ կը թուի Լիբանանեան պատերազմը յիշեցնող վիճակի մը մէջ, եւ դժբախտաբար բարի լուծումի յոյսի եւ լոյսի նշոյլ մը տեսանելի չէ մօտիկ հորիզոնին վրայ: Լիբանանի պատերազմին վերջ բերող խաղաղութեան կնքահայրերը եղան Սուրիան եւ Սէուտի Արաբիան տասնըհինգ տարուայ պատերազմէ ետք, մէկը իր բազկի ուժով միւսն ալ իր դրամի հմայքով: Սուրիոյ պարագային ալ, հոս ու հոն կարճատեւ հանդարտութիւն բերող կասկածելի զինադադարներ եւ համաձայնութիւններ կրնան պատահիլ, սակայն երկար ըլլալ կը թուի պայքարը:

Ժամանակի հետ տակաւ զօրացող Թուրքիոյ դիրքն ու դերը պիտի մղեն որ ան Իրանի հետ միասին դառնայ ապագային Սուրիոյ խաղաղութեան կնքահայրը:

Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակը քանի մը տարի հեռու է մեզմէ, եւ վստահ որ Սուրիոյ ու Լիբանանի հայութիւնը մեծ թափով պիտի պատրաստուի զայն յիշատակելու եւ հազարներով հաւաքուելու Տէր-Զօրի աւերակ դարձած Նահատակաց Եկեղեցիին շուրջ: Թուրքիան, եթէ մինչեւ այն ատեն չլսէ իր քաղաքակիրթ եւ լայնախոհ զաւակներուն յանցանքէն ամչցող եւ յանցանքը ընդունող ձայնը, պիտի փորձէ իր Արաբի բարեկամ թուացող միջոցներով խանգարել այնտեղի հայութեան ազգային աշխատանքը:

ՄԻՇՏ ՍՈՒՐԻՈՅ ԿՈՂՔԻՆ ըլլալով, կը նշանակէ չդիրքորոշուիլ այս կողմի կամ այն կողմի հետ, եւ վաստկիլ յարգանքն ու սէրը Սուրիացիներուն անխտիր, ճիշդ այնպէս ինչպէս Լիբանանի հայութիւնը որդեգրելով դրական չէզոքութիւն անցեալին եւ ըլլալով ՄԻՇՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՈՂՔԻՆ, շահեցաւ յարգանքն ու սէրը բոլոր Լիբանանցիներուն: Հայութեան չէզոքութեամբ շահուած սէրն ու յարգանքը Սուրիացիներու մօտ, անպայման որ արգելք պիտի հանդիսանայ Թուրքիոյ կողմէ Սուրիոյ մէջ հայատեաց աշխատանքի մը յաջողութեան, որովհետեւ ճերմակը սեւ ներկայացնել դժուար պիտի ըլլայ:

ՄԻՇՏ ՍՈՒՐԻՈՅ ԿՈՂՔԻՆ թող ըլլայ ամէն հայու սիրտն ու հոգին եւ բոլորս աղօթենք որ խաղաղութեան աղաւնին բոյն դնէ հայու բարեկամ Սուրիոյ մէջ:


Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES

New York Life · Anthem Blue Cross · BlueShield · Aetna · Health Net A Better Decision · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ
# ԳԵՂԱՄ ՎԱՆԻԿԵԱՆ (ՎԱՆԻԿ)

ՏՕՔԹ. ԵՂԻԿ ՃԷՐԵՃԵԱՆ

Հնչակեան ընկերվարութեան մարմնացումն է Վանիկ:

Վանիկ ծնած է Վան, 1889-ին:

Մանուկ տարիքին կը կորսնցնէ հայրը եւ կը յանձնուի իր մօրեղբօր, Հնչակեան յայտնի յեղափոխական Հաճի Յակոբ Արծրունիի (Աւետիսեան) խնամքին:

Այգեստանի մէջ ան կ՚ապրի իր մեծ մօր հետ ու կ՚աւարտէ տեղւոյն ծխական դպրոցը: Ապա կը յաճախէ Երամեան դպրոցը եւ զայն կ՚աւարտէ փայլուն ձեւով:

Յ. Արծրունի յաճախակի եւ երկարատեւ կը բացակայէր տունէն: Ան Վանի եւ Պարսկաստանի միջեւ կուսակցութեան կապն էր: Անոր մասին դաշնակցական Մալխաս կը գրէ. «Հաճի Յակոբը, ժամանակ մը մեր փոխադրական գործին օժանդակեր է անձնուիրաբար: Երբ Փայլակը Մակուի շրջանի Քիշմիշ Թեփէ գիւղն էր, փոխադրական գործով, Հաճի Յակոբը, որ այդ ժամանակ այդ տեղ կը գտնուէր, հնարաւոր աջակցութիւնը չէ զլացեր, օգտակար լինելու: Շատ հազուագիւտ բացառութիւններէն մէկն է եղեր, որ մեկդի դրած կուսակցական նեղ մտայնութիւնը, երբ կրցեր է օգնել մեզի»:

Իր մօրեղբօր կարճատեւ երեւումները տան մէջ եւ անոր ընկերակցող զինեալ ֆետայիներու խորհրդաւոր կերպարներն ու կեանքը, կը գրգռեն պատանի Վանիկին հետաքրքրութիւնը:

Տակաւին դպրոցական, իր դասարանցիներով, ան կը ստեղծէ հնչակեան աշակերտական խմբակ մը:

«Այնուհետեւ, մենք մեր ժամանակին մէկ մասը կը յատկացնէինք կուսակցական գրականութեան ընթերցումի, խմբական ժողովներու եւ վիճաբանութիւններու. Վանիկ նաեւ այդ հասակէն իսկ կատարեալ պաղարիւնութեամբ ու գաղտնապահութեամբ կը կատարէր իրեն վստահուած (կուսակցական Ե.Ճ.) յանձնարարութիւնները» (1):

1907-ին, ուսման եւ յեղափոխական շարժման մէջ աւելի խոր ընդգրկուելու համար, Վանիկ կը մեկնի Կովկաս: Հազիւ տարի մը անց, Օսմանեան Սահմանադրութենէն անմիջապէս ետք, ան իր մօրեղբօր հետ կը վերադառնայ Կ. Պոլիս: Տարի մը դեղագործական բաժանմունքին մէջ ուսանելէ ետք, կը հետեւի իրաւաբանական ճիւղին եւ այդ կ՚աւարտէ 1914-ին:

Վանիկի ուսանողական տարիները կը դառնան անոր հասարակական կեանքի բեղմնաւոր տարիները: 1910-ին Վանիկի ջանքերով կը հիմնադրուի ՍԴՀԿ Կ. Պոլսոյ «Կայծ» Ուսանողական Միութիւնը, որուն ատենապետութիւնը կը ստանձնէ ան: Յաջորդ տարի կը սկսի լոյս տեսնել Միութեան օրգան «Կայծ» ամսաթերթը՝ Վանիկի խմբագրապետութեամբ:



Դժուար է գերագնահատել «Կայծ»ի խաղցած դերը՝ ուսանողները որպէս ապագայ հասարակական գործիչներ պատրաստելու գործին մէջ (2): Դժուար է նաեւ գերագնահատել Վանիկի դերը «Կայծ»ի հետեւողական ու կազմակերպուած գործունէութեան մէջ: «Կայծ» իր դասախօսութիւններով, վիճաբանական երեկոներով, գրադարանով եւ ամսաթերթով կը դառնայ գաղափարական դպրոց մը, ուր իրենց գաղափարական դաստիարակութիւնը կը ստանան, հասարակական կեանքի առաջին փորձառութիւնը ձեռք կը ձգեն ու գրական թոթովանքները կը կատարեն ապագային յայտնի դարձած շատ մը ազգային-կուսակցական գործիչներ: «Կայծ» աւելի քան 20 հայաշատ քաղաքներու եւ գիւղերու մէջ կ՚ունենայ իր ուսանողական եւ աշակերտական մասնաճիւղերը:

«Կայծ»ին Վանիկ կ՚աշխատակցի խմբագրականներով եւ ընկերվարական բնոյթի յօդուածներով: Ան հանդէս կը բերէ գիտական-վերլուծական միտք եւ սուր գրիչ: Օրինակի համար, «Ընկերվարական Բանուորական Սենտիկաները Կ. Պոլսոյ Մէջ» յօդուածին մէջ, Վանիկ կու տայ Կ. Պոլսոյ մէջ տակաւին նոր սկսող աշխատաւորական արհեստակցական միութիւններուն ճշգրիտ պատկերը ու կ՚աւելցնէ. «Զնայած որ Պոլսոյ մէջ կը գտնուին հայ երկու սոցիալիստ կուսակցութիւններ – Ս.Դ. Հնչակեան եւ Հ. Յ. Դաշնակցական – եւ անոնց կեդրոնական մարմինները, բայց այնուամենայնիւ նոքա մերձեցում չեն ցուցուցած դէպի այդ բանուորական կազմակերպութիւնները» (3): Այլ պարագայի մը, պատասխանելով «Կայծ»ին յղուած հարցումի մը, Վանիկ անդրադառնալով բարոյագիտութեան փիլիսոփայական բարդ հասկացութեան, կը գրէ. «Մեզ կը հարցնեն, թէ կա՞յ յաւիտենական բարոյականութիւն: Ո՛չ, կը պատասխանենք մենք: Այո՛, կան անհատներ, որոնք կ՚ընդունին թէ կայ յաւիտենական բարոյականութիւն: Ատոնք մեթաֆիզիք հայեցողութիւն ունեցողներ, բարոյագէտներ են: Նոքա կ՚ընդունին, որ այսօրուայ բարոյական հասկացողութիւնը ինչ որ է, նոյնը կը մնայ միշտ, որովհետեւ անոնք խնդիրները խորը, առարկայական կերպով, մադերիալիստական ուղղութեամբ չեն քններ: Մենք կ՚ընդունինք, որ կեանքը կը փոխուի, որովհետեւ արդիւնաբերութեան միջոցները, տնտեսական միջավայրը եւս կը փոխուին: Կեանքի փոխուելուն հետ կը փոխուի նաեւ անկէ յառաջացած գաղափարաբանութիւնը, ուրեմն եւ բարոյականութիւնը» (4): Վանիկի աղմուկ հանած յօդուածներէն մէկն ալ կ՚ըլլայ Ք. Մարքսի մահուան 30-ամեակին առիթով հրապարակուած «Կայծ»ի բացառիկ թիւին անոր ստորագրած «Մարքսիզմը Հայ Կեանքին Մէջ» յօդուածը: Յօդուածին մէջ պաշտպանուած այն միտքին, թէ մարքսիզմը հայ կեանքէն ներս առաջին տարածողը եղած է Հնչակեան Կուսակցութիւնը, «Կայծ»ի յաջորդող թիւերուն մէջ կ՚առարկէ Ռուսաստանի Բ. Տումայի Թիֆլիսի պատգամաւոր, մենշեւիկ կուսակցութեան անդամ Արշակ Զուրաբեան: Վանիկ, երեք շարունակականով կը պատասխանէ Զուրաբեանի առարկութիւններուն:

Այս բանավէճը իր խորքին մէջ նոր չէր: Այդ սկսած էր դեռ 1905-էն, որուն մէջ ներգրաւուած էին Փարամազ եւ Ստեփան Շահումեան: Բանավէճը կը շարունակուի նաեւ այնուհետեւ ու Խորհրդային Հայաստանի պատմագրական դպրոցին կը հակադրուին Ստեփան Սապահ Գիւլեան, Անդրանիկ Կէնճեան, Արսէն Կիտուր, Հրանդ Գանգրունի եւ ուրիշներ: «Կայծ»ի մէջ գրած իր վերջին՝ «Կեանքի Նպատակին Շուրջ» յօդուածին մէջ, Վանիկ կու տայ կեանքի նպատակին հանդէպ իր փիլիսոփայական ըմբռնումը. ան կը գրէ. «Այսպէս նաեւ ժամանակակից կարգ մը փիլիսոփաներ չեն աշխատիր վերլուծել, թէ ինչէ՞ն կրնան յառաջ եկած ըլլալ ներկայ թշուառութիւնները եւ ո՞րն է զանոնք վերացնելու արմատական դարմանը, այլ կը սկսին «փիլիսոփայել», թէ ինչո՞ւ կեանքը պիտի լինէր եւ մինչեւ ո՞ւր պիտի երթայ, ինչո՞ւ տիեզերքը կայ, եւայլն: Ես չեմ մտներ այդ հարցերուն մէջ, ատոնց մէջ մխրճուած են շատ ու շատ մեծ փիլիսոփաներ ու սակայն այնտեղ ալ թաղուած են: Ես կ՚ուզեմ մտնել անօթութենէ չորցած կուրծքին տակ, այնտեղ մրափող առիւծին բաշերը թափ տալու համար, ես կ՚ուզեմ մտնել արցունքոտ մօր աչքերուն մէջ՝ այնտեղ կայծկլտող հուրը բոցավառելու համար. ես կ՚ուզեմ գործ ունենալ աշխատող բազուկներու հետ, անոնք են կեանքի, երջանկութեան աղբիւրները: Ահա իմ փիլիսոփայութիւնը» (6):

LOS ANGELES -- Voyage to Amasia, a new documentary film by Randy Bell and Eric V. Hachikian, won the Special Jury Award at the Alexandria Film Festival in Alexandria, Virgina this past weekend. A yearly tribute to cinema, the Alexandria Film Festival presents feature-length films, documentaries, animation, and shorts by emerging and established filmmakers to an engaged audience seeking new or rarely seen films. In its sixth year, the mission of the Alexandria Film Festival is to promote cinema as an important cultural and educational asset and market Alexandria as a dynamic venue for creating, exhibiting, and experiencing film.

Voyage to Amasia will have its West Coast premiere on Saturday, December 1 at 10:00pm at the Arpa International Film Festival, where it is screening at the Egyptian Theater in Hollywood, CA. More information is at www.itsmyseat.com//events/406705.html. The film had its world premiere at the Pomegranate Film Festival in Toronto in December 2011, where it won the prize for Best Documentary. It has also screened at the 2012 Golden Apricot International Film Festival (Yerevan, Armenia), the Minneapolis International Film Festival, the Philadelphia Independent Film Festival, and the St. Louis International Film Festival.

Voyage to Amasia documents composer Eric Hachikian's return to his ancestral home - Amasia, Turkey - nearly 100 years after Ottoman soldiers deported his grandmother during the Armenian Genocide. The film is set to Eric's piano trio of the same name, which provided the initial inspiration for the documentary. Voyage to Amasia traces a path through the past, honoring Eric's relationship with his grandmother and uncovering what her family's life in Turkey might have been like. It also explores how the events of nearly a century ago continue to strain the relationship between Armenians and Turks today. Inspired by one family's story, the filmmakers embark on their own journey in the hopes of finding a greater understanding between two peoples still at odds. More information on the film can be found at www.voyagetoamasia.com.

Randy Bell is a Washington, DC-based independent filmmaker. His documentary films, which explore subjects as diverse as American popular music, mid-century European modernist architecture, and the AIDS orphan crisis in Kenya, have won awards from the Cleveland International Film Festival, the New England Film and Video Festival, and the Ivy Film Festival. He received his Bachelor of Arts from Harvard University in 2000, and his Master in Public Policy from the Harvard Kennedy School of Government in 2010.

Eric V. Hachikian is an Armenian-American composer whose music has been hailed by the New York Times as "lovely and original." His compositions and orchestrations can be heard in a variety of major motion pictures, network television shows, and national and international ad campaigns. They have been performed at New York's Carnegie Hall, at Boston's Symphony Hall, at The Getty in Los Angeles, and Off-Broadway in New York City. A classically-trained composer, as well as a self-taught DJ and perpetual student of world music, Eric's musical style has no boundaries, and his multi-genre interests result in a unique and personal sound.

# Mexico City Committee Recomends

Continued from page 1

cording to him "will be shameful for Mexicans".

Mukhtarov charged that the government of Armenia, with which Azerbaijan has tense relations, and local Armenians were behind the campaign to remove Aliyev's statue.

"We are aware that the current situation was driven by the Armenian government and the Armenian local diaspora in an attempt to discredit the work, life and dedication of Azerbaijan's national leader," Mukhtarov said a news conference.

Azerbaijan paid as much as $10 million to erect the statue, clean up the section of park where it sits and make similar repairs at a second site downtown.

The commission of three writers and analysts appointed by the city government said authorities erred by accepting money to allow a foreign government to essentially decide which political figures or historic events should be commemorated in the capital's public spaces.

"In view of the majority opinions of the citizens and neighbors, the sculpture of Heydar Aliyev should be removed from the emblematic spot" on the Reforma boulevard, commission member Guillermo Osorno said.

The panel suggested that a citizen board be set up to review such proposals in the future.

Protesters have said they are offended by a monument to an authoritarian figure like Aliyev, who led Azerbaijan first as Communist Party boss during Soviet times and then as president from 1993 until his death in 2003.

Critics' anger has been amplified by a plaque on Aliyev's statue that describes him as "a brilliant example of infinite devotion to the motherland, loyal to the universal ideals of world peace" and by the location of the statue not far from monuments to Mahatma Gandhi, Abraham Lincoln and Mexico's national heroes.

# Armenian Treasures on Show in the British Library



LONDON -- A display of Armenian treasures celebrating the 500th anniversary of Armenian printing, the designation of Yerevan as 2012-2013 World Book Capital and the 20th anniversary of the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the United Kingdom, is on show in the Ritblat Treasures Gallery of the British Library until the end of January 2013.

On view are a number of exquisitely illuminated manuscripts and rare specimen of the earliest Armenian printed books the Library holds, the Library's official website informs.

Printing in Armenian began in 1512 in Venice, spreading to other European cities, the Near and Middle East and India in the centuries that followed. In Armenia itself printing was introduced in 1771.

# The Exodus of Musa Dagh Armenians

Continued from page 1

who owned a 1,540 hectare domain at a place called Anjar in the Bekaa valley. Although Rushdi Bey asked for 10 million FF, he was willing to accept, out of "patriotic sentiments," an "important reduction" if the Turkish government asked him to. The land was purchased at a reduced price.

To Anjar

Relocation from Ras al-Basit to Anjar took place from September 3-16. The refugees were shipped to Tripoli and thence entrained to Riyaq, where they received food, fruit, and refreshments on the part of a local Armenian reception team. From Riyaq they were transported aboard trucks to their final destination of Anjar. This was a rocky and thorny terrain with no dwellings whatsoever. Because the refugees received an inadequate number of tents (that could accommodate twelve persons each), ordinary linen was additionally distributed for the uprooted to make their own shelters. As in Ras al-Basit, here too the population stuck together in compact groups according to their villages of origin. Given the inhospitable geographical milieu, scores fell ill and/or died. With the cold winter fast approaching, some 1,778 women and children were dispersed among fourteen villages and towns in the general vicinity and housed in vacant buildings or among Christian families with accommodation possibilities. The men in turn stayed at Anjar to construct stone dwellings that the French had planned. The original project would give each family a house consisting of two rooms, a kitchen, and a restroom on a 400 sq. meter lot. But as France entered World War II with its finances earmarked for that effort, the original plan was reduced to a single room with an outdoor restroom. Each adult male received an addition parcel of land for farming. By spring 1940 the Armenians occupied their new houses. The three religious communities (Apostolic, Evangelical, and Catholic) in turn received specific plots within the village to build their churches and schools on. A new life in a new country thus began to take shape for the Armenians from Musa Dagh.

Today Anjar is a 73-years-old beautiful, thriving town with all kinds of community facilities and businesses. Notwithstanding, given the political turmoil in the Middle East, its future status and that of the Armenian communities in the region as a whole remain tenuous at best.

www.massisweekly.com
updated every Friday

# ԴՈԿՏՈՐ ԱԲԷԼ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ «ԳԱԼԻԼԵԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՍԿԻԶԲ ՄԸ ՈՐ ՎԱԽՃԱՆ, ԵՒ ՎԱԽՃԱՆ ՄԸ ՈՐ ՆՈՐ ՍԿԻԶԲ ՈՒՆԵՑԱՒ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

*ԴՈԿՏ. ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆ*




Քրիստոսի Յարութիւնից անցել է մօտ 2000 տարի. փոխուել են ժամանակները, աշխարհը, մշակոյթը, չափանիշները, մարդկային մտածելակերպը, սակայն բոլոր ժամանակներում մարդ արարածին յուզել է կեանքի եւ մահուան յաւերժական հարցը, որին փորձել են պատասխանել տարբեր կրօնների առաջնորդները, փիլիսոփաները, գիտնականները՝ տալով իրենց ուրոյն պատասխանները: Իսկ ո՞րն է կեանքի սկզբի եւ վախճանի վերաբերեալ Քրիստոնէութեան պատգամը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» աւետիսը, որով սկսւում է քրիստոնէական իմաստասիրութեան եւ աստուածաբանութեան դոկտոր Աբէլ քհն. Մանուկեանի հեղինակած գիրքը, «լսւում է» գրքի իւրաքանչիւր տառից, որպէսզի «Ականջ տանք այս աւետաբեր ձայնին, ու ձգենք, որ առինքնող արձագանքը անոր յաղթահարէ մեր մտքին կասկածը, ներթափանցելով խօսի ան մեր ներսիդիին՝ մեր էութեան ու սրտին հարազատ բաբախումներուն հետ» (էջ 17):

Գրքի սկզբում՝ «Յարութեան առաջին վկաները» գլխում, հեղինակը համադրաբար ներկայացնում է յարութեան մասին Աւետարանների աւանդած վկայութիւնները, երբ իւղաբեր կանայք, այնուհետեւ Պետրոսն ու Յովհաննէսը, այցելելով Տիրոջ գերեզմանը, տեսնում են, որ գերեզմանի քարը մի կողմ է գլորուած եւ Տիրոջ մարմինն այնտեղ չէ: Հեղինակը վերլուծում է աշակերտների զգացմունքները, որոնց համար յարութեան իրողութիւնը, մտքէ ու իրական երեւակայութենէ վեր՝ «անհաւատալի» մի բան էր: Շարունակելով միտքը յաջորդ՝ «Թերահաւատներն ու թերահաւատութիւնը», «Յիսուսի ճիգը՝ տարհամոզելու թերահաւատները Յարութեան փաստովե գլուխներում՝ հեղինակը կանգ է առնում աշակերտների եւ առհասարակ մարդ արարածի՝ յարութեան փաստի հանդէպ ունեցած խորը կասկածի վրայ: Աշակերտները, որոնք այնքան մտերիմ էին Յիսուսին, Նրա հետ էին եղել կեանքի ողջ ընթացքում, ականատես եղել Նրա հրաշքներին, լսել յարութեան մասին Յիսուսի խօսքերը, այժմ թերահաւատօրէն են վերաբերում յարութեան փաստին: Ներկայացւում է Աւետարանների այն հատուածները, որտեղ Յիսուսը յետյարութեան իր երեւումներով՝ Մարիամ Մագդաղենացուն, միւս Մարիամին, արտ գնացող աշակերտներին, Էմմաւուսի ճամփորդներին (ի դէպ այստեղ հեղինակը հետաքրքրական վարկած է առաջադրում, որ այս ճամփորդները կարող էին լինել Պետրոսն ու Յովհաննէսը, ովքեր Յիսուսի յարութեան մասին լուրերին կարեւորութիւն չտալով գնում էին Էմմաւուս) փորձում է համոզել աշակերտներին, սակայն ամէն անգամ բախւում է նրանց թերահաւատութեան «կարծր ժայռին»: Հեղինակն անընդհատ փորձում է աշակերտների միջոցով վերլուծել, հասկանալ մարդ արարածին առհասարակ. «Սովորական մարդը կը հաւատայ այն ժամանակ միայն, երբ խնդրոյ առարկայ երեւոյթը ենթակայ կ՚ըլլայ իր զգայարաններուն: Մարդուն համար գիտութիւնը հիմնականօրէն փորձառական է եւ ոչ թէ վերացական» (էջ 33): Յաջորդ անգամ Յիսուսը յայտնւում է ուղղակի Տասնմէկ աշակերտներին, երբ նրանք միասին հաւաքուած էին՝ փորձելով այսպէս փարատել նրանց սրտերում տիրող կասկածները: Նա ցոյց է տալիս իր ոտքերի եւ ձեռքերի վէրքերը, անգամ ուտելիք է խնդրում նրանցից, «որպէսզի անոնք ամբողջապէս հաւատան, թէ ուրուական մը չէ իրենց տեսածը, այլ՝ մարմնաւոր եւ ճշմարիտ ներկայութիւնն է իրենց չարչարուած, խաչուած, թաղուած, բայց այժմ մեռելներէն յարութիւն առած Վարդապետին» (էջ 35): Այս առումով դիպուկ է յատկապէս Թովմաս առաքեալի հետ Յիսուսի հանդիպման վերլուծութիւնը: Ներկայացնելով Յովհաննու Աւետարանի պատմութիւնը, հեղինակն իրաւամբ նշում է, որ «Թովմասին անձին ու անոր այս վերաբերմունքին մէջ իսկական մարդ արարածը կը խօսի՝ ոչ միայն անցեալին ու ներկային յատուկ մօտեցման ձեւերուն մէջ, այլ՝ բոլոր ժամանակներուն համար» (էջ 36):

Հետեւեալ «Ժամադրութիւն Գալիլեայի մէջ», «Տեղական առաքելութիւն», «Տիեզերական առաքելութիւն» գլուխներում նախ հեղինակը բացատրում է, թէ ինչո՞ւ յարուցեալ Յիսուսը աշակերտների հետ ժամադրավայր նշանակեց հէնց Գալիլեան, այլ ոչ թէ Գողգոթայի պարտէզը կամ գերեզմանի մօտակայքը: Ուրոյն կերպով մեկնաբանւում է Մատթէոսի Աւետարանում յիշատակուող Քրիստոսի վերջին պատգամը. «Ինծի աշակերտ դարձուցէք բոլոր հեթանոսները, զանոնք մկրտեցէք Հօր, Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն անունով, սորվեցուցէք անոնք պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի: Եւ ահա ես ամէն օր ձեզի հետ պիտի ըլլամ՝ մինչեւ աշխարհի վախճանը»:

«Սիմոն Պետրոս եւ սիրոյ հրամայականը» գլխում Յարուցեալ Յիսուսի երեւումներից առանձնացւում է «Հրաշալի Ձկնորսութեան» ժամանակ Պետրոսի հետ հանդիպումը եւ զրոյցը: «Հովուական պաշտօնը» հատուածում հեղինակը մեկնաբանում է Պետրոսին տրուած «Արածէ իմ գառներս» հրահանգը: «Համբարձման եղելութեանը եւ պատգամին» անդրադառնալուց յետոյ, հեղինակը Պօղոս առաքյալի դարձի պատմութեամբ ամբողջացնում է Յիսուսի յետյարութեան երեւումների նվիրուած ընդարձակ անդրադարձը:

Այն դաւանութիւնը, թէ «Նազովրեցի Յիսուս Քրիստոս, որ խաչուեցաւ, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ» հեղինակը ներկայացնում է՝ որպէս նախնական եկեղեցու անկիւն հիմքը, առանց որի «Քրիստոնէութիւնն ընդամէնը բարոյական օրէնքներու ժողովածու մը կրնար ըլլալ, զուրկ՝ իր ազատարար եւ կենսաբաշխ ուժէն, մեղքի եւ մահուան կապանքներէն մարդը առաջնորդելու կարող դէպի կեանքը յաւիտենական, կատարեալ սէրն ու վերջին իմաստը իր գոյութեան՝ դէպի Աստուածն ու Արարիչը» (էջ 71):

«Յարութենէ ետք Յիսուսի «Նորափետուր զարդարեալ» ներկայութիւնը» Ներսէս Շնորհալի հայրապետի բառերով վերնագրուած գլխում հեղինակը փորձում է բացատրել յարութեան իրողութիւնը: Ընդգծելով, որ հաւատքի ընկալումը բացատրութեան կարիք չունի եւ այդ անմեկնելի խորհուրդին պէտք է ակնածանքով եւ խորը հաւատով մօտենալ, այնուամենայնիւ, հեղինակն իր խորաթափանց մտքով կարողանում է վերլուծել, թե ինչպէս ընկալուեց աշակերտների կողմից յարութեան իրողութիւնը. ,Յատկանշական է, ուրեմն, որ իրենց գրուցակիցն ու սեղանակիցը ուրիշ ներկայութիւն մըն է. այո, նոյն Յիսուսն է, բայց փոխարկուած նոր գոյութեան, Շնորհալի Հայրապետին բառով՝ «Նորափետուր զարդարեալ» ներկայութեան, մահուան եւ յարութեան ընդմէջէն գերազանցած ըլլալով նիւթին սահմանափակումները, թեւակոխելով աստուածային չափանիշը. տարածութեան մէջ, ժամանակին մէջ՝ բայց միեւնոյն ատեն նոյնացած յաւիտենութեան հետ» (էջ 75):

Քրիստոնէական հաւատքի կարեւորագոյն հիմքերից մէկի՝ Քրիստոսի Երկրորդ Գալստի եւ Վերջին դատաստանի մասին խօսելով՝ գրքում քննութեան են առնւում վերջին դատաստանի վերաբերյալ սխալ պատկերացումները եւ դրանց արտահայտումները, ինչպէս քրիստոնէութեան սկզբնական դարերում, այնպէս էլ մեր ժամանակներում:

«Յարուցեալ Յիսուսի մնայուն եւ անընմիջելի ներկայութիւնը աշխարհի, պատմութեան եւ մեր կեանքին մէջե գլուխը սկսւում է Քրիստոսի հետեւյալ բառերով. «Ահաւասիկ ես ձեզի հետ եմ բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանըե: Ուշադրութիւն դարձնելով այս հատուածի «ձեզի հետ եմե արտայայտութեան ներկայ ժամանակի գործածութեան վրայ՝ հեղինակը գրում է. «Առաքեալներուն տրուած սոյն հաւաստիացումը գերազանց երաշխիք մըն է այն մասին, որ Յիսուս նաեւ Իր հրաշափառ յարութենէ ետք, «զամենայն աւուրսե մնայուն եւ անընդմիջելի կերպով ներկայ է Իր աշակերտներուն եւ անոնց միջոցով՝ մեր կեանքին մէջ» (էջ 85): Յիսուսի մշտապէս մեր կեանքում ներկայ լինելու գաղափարն ընկած է Տիրոջ «անմիջական գործակցութեամբ» գործող աշակերտների քարոզչութեան հիմքում. «Քարոզել Փրկութեան Աւետարանը եւ վկայել յարութեան իրողութիւնը՝ որ Յիսուս ներկայ է աշխարհի եւ մեր կեանքին մէջ» (89): Անդրադառնալով Յիսուսի՝ երկինք համբառնալու պատմութեանը՝ հեղինակը կանգ է առնում Գործք առաքելոցի այն տեղեկութեան վրայ, թէ մինչ առաքեալները դիտում էին, թէ ինչպէս է Յիսուսը երկինք համբառնում, մի ամպ ծածկում էր Նրան իրենց տեսողութիւնից: Այստեղ վկայակոչելով Հին Կտակարանից մասնա-

Շար.ը էջ 19

**Հենրիկ Անասեանի «Ա՛յս Եմ Ես»**
**Գրքին Նուիրուած Գրական Ձեռնարկ**

**Կազմակերպութեամբ՝**
**Քալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան**

Տեղի կ՛ունենայ հինգշաբթի Դեկտեմբեր 6-ին

Երեկոյեան ժամը՝ 5-6 ընկերային ժամ
6-9 բուն ձեռնարկը

Հանդիսավար ու բացման խօսք՝
ՔՀԳՄիութեան նախագահ՝
Ծահէ Քէօրօղլեան

Բանախօսներ՝ Փրոֆ. Օշին Քէշիշեան
Բանաստեղծ Գէորգ Քրիստինեան
Բանասէր Յովսէփ Նալպանտեան

Գեղարուեստական բաժին՝
«Սիփան» երգչախումբի կատարումով

Տեսաերիզի ցուցադրութիւն

Սիրով հրաւիրուած է գրասէր հանրութիւնը

Վայր՝ Կլէնտէյլի հանրային գրադարան
Հասցէ՝ 222 E. Harvard, Glendale Ca

Մուտքը՝ ազատ

Մարեւանտ եւ Հարւարտ փողոցներու անկիւնը գտնուող ինքնաշարժերու կանգառը երեք ժամ ձրի տրամադրուած է Հանրային գրադարանի կայանատոմսի վաւերացումով:

# ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍԸ



*ՏՕՔԹ. ԳԷՈՐԳ Պ. ՔԷՇԻՇԵԱՆ*

*Գաղութիս մէջ ընկերային թէ մշակութային ձեռնարկները գլխաւոր կը հրմշտկեն... հոգեվարքի մէջ տապլտկող համայնքին մը հոգեզմայլ ճիգերն են, որոնց ականատես եւ ականջալուր կը դառնանք ամէն օր... մեր ժողովուրդին ապրելու տենչը սակայն հմայիչ է եւ ողջունելի...: Նմանօրինակ միջոցառում մըն էր Մանուէլ Մարաշլեանի յղացած եւ կազմակերպած ձեռնարկը՝ Կիրակի, Օգոստոս 26ին Գալիֆորնիոյ Կլենտէյլ քաղաքի Պետական Երկրորդական վարժարանի սրահին մէջ: Յովհաննէս Այվազովսքիի յուշահանդէսը՝ եզակի, առինքնող, մեծապէս տպաւորիչ մտքի, սրտի եւ հոգիի խնճոյք մըն էր անտարակոյս, որ բազմահարիւր հանդիսականներս ափ ու բերան ձգեց գործադրուող յայտագրով, կատարողական արուեստագէտներու մասնակցութեամբ եւ մանաւանդ գաղութիս մէջ հայ մշակութային գործիչ, տաղանդաւոր ասմունքող՝ Սեդա Հայրիեանի հանդիսավարութեամբ:*

*Մեզի համար անակնկալօրէն տպաւորիչ էր եւ գինաթափող: Մեր ժողովուրդին աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքին մեր տարեցներուս յիշողութիւնը թարմացնող եւ նորահաս սերունդին ուշադրութեան յանձնուելիք տիտան մը արդարեւ որուն գործերը որքան գնահատելի, բայց իր անձին, տաղանդին, վաստակին ձօնուած այս միջոցառումը փառք ու պատիւ ապահովեց, որքան հեղինակին նոյնքան եւ ձեռնարկը իրականացնող, իր համեստութեան մէջ մեծ հայրենասէրին, մշակութային երկրպագու Մանուէլ Մարաշլեանին: Այս վերջինը որպէս ուխտաւոր ճամբայ էր ելած արդարեւ Լոս Անճելոսէն եւ հասած Սեւ Ծովի ափին, Խրիմի Թէոթէասիա քաղաքի մէջ թաղուած մեծանուն նկարիչի շիրիմին եւ հոն գտնուող խոշոր ժայռի մը վրայ (որուն վրայ կը նստէր Այվազովսքին երբ կը գծէր) տեղաւորուած էր իր իսկ յղացած մէկ ցուցատախտակը զոր իր հետ ովկիանոսներ կտրելով հասցուցած էր Թէոթոսիայի ծովափին: Հոն, հոգեհանգիստ էր սարքած տեղւոյն քահանային կարգադրութեամբ:*

*Այս յուշահանդէսը իր տարողութեամբը աննախընթաց երեւոյթ մը դարձաւ այդ գիշեր, փառք ու պատիւ ապահովելով Մանուէլ Մարաշլեանին, հանդիսավար Սեդա Հայրիյեանին եւ յայտագրին բաժին բերող արուեստագէտներուն:*

*Վարձքդ կատար սիրելի Մանուէլ:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** -------------

**Tel :**----------------------- **Fax :** -------------------------


# ՅԱՋՈՂԱԳՈՅՆ ԱՌԻԹ

*«Լարք»ի հրաւէրով Հայաստանից Լոս-Անճելոս ժամանած ազգային երաժշտութեան մասնագէտ-երաժշտագէտ Արթուր Շահնազարեանն իր կեցութեան մէկ շաբաթը չլրացրած արդէն երրորդ անգամ ներկայացաւ երաժշտասէր հասարակութեանը:*

*Հայրենի արուեստագէտն ունի բաւականին յագեցած աշխատանքային օրեր: Առաջին ելոյթը Երեքշաբթի, Նոյեմբեր 18ին էր, «Հին Կտակ» խորագրով համերգի ընդմիջից (խմբավար Վաչէ Պարսումեան), ուր իր իսկ վերծանած խազերի միջոցով լսուեցին կոմիտասեան շարականների հարազատ տարբերակները՝ համադրուած մեզ ծանօթ ընթացիկ ձեւի հետ միաժամանակ: Համերգը պիտի կրկնուի Նոյեմբերի 25ին, երեկոյեան ժամը 6ին, Saint Mark's Episcopal Church եկեղեցում 1020 (N. Brand Blvd, Glendale, CA 91202):*

*Երկրորդ ելոյթը դասախօսութիւնների շարքի Ա. դասախօսութիւնն էր, Երեքշաբթի, 20 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 8ին, «Լարք»ի Դրբանջեան սրահում, նիւթն էր՝ Հայ հնագոյն երաժշտութիւն, Ա մաս-Էպիկական երաժշտութիւն, Բ մաս-Պարեր: Շարքի Բ. դասախօսութիւնը կայացաւ Ուրբաթ, Նոյեմբեր 23ին, նոյն վայրում, հետեւեալ թեմայով՝ Հայ գեղջուկ (ժողովրդական) երաժշտութիւն, Ա. մաս - Հարսանեաց ծէս, Բ. մաս - Հայեցի երգեցողութիւն (ոճը):*

*Ներկայ էինք, մինչ այդ մի բարեկամից լսել էինք, թէ Արթուրը տարիներ առաջ, Սիսիանում, ընկերական շրջանակում հայկական հարսանեկան ծէսերի երգերով վարել է մի ամբողջ հարսանիք: Երբ այս մասին նրան յիշեցրինք, նա այդ երեւոյթը աւանդոյթ դարձնելը գտնում է ոչ այնքան կիրառելի, քանի որ ժամանակին հարսանիքի հիւրերը իրենք եւս մասնակից էին կատարումներին: Մեր օրերում այդպիսի ընթացքի համար պէտք է պատրաստել համոյթ, որ կարողանայ ներկայացնել մեր աւանդական հարսանեկան երաժշտական արարողութիւնը, եւ հրաւէր ստանայ հարսանիքներ անցկացնելու:*

*Իւրաքանչիւր միտք դասախօսը տանում էր մինչեւ ընդյատակ, երեւոյթի արմատներին եւ շատ հասկանալի բացատրում էր ընդունուած ձեւերի եւ իրական պատկերների տարբերութիւնները, նոյնիսկ՝ թափահարելով ընդունուած մեծութիւններ: Ջկար վերամբարձ ոճ, պարզ եւ հասկանալի (երբեմն նոյնիսկ շատ ժողովրդային) խօսելաձեւ, որ մտածում էիր, թէ կարելի էր այս միտքը աւելի*

*Շար.ը էջ 19*


ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ՅՈՒՇԱՐՁԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ






Սրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

**(626) 797-7680** կամ

**(818) 429-2322** թիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ՚ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:



**ԿՈՉ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒՆ**

Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուհիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ թիւերուն:

(818) 429-2322 Տիկ. Վարդուհի Գազանճեան
(626) 422-9121 Տիկ. Արուսեակ Գրիգորեան

## ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔ ԵՒ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Ատենապետ՝ Գուրգէն Պէրքչանլար եւ Միրիճան Կիւրեղեանը՝ «Պոլսահայ Միութեան Ցկեանս Պատուոյ Անդամ»ի յուշատախտակը ձեռին

*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ*

Աւանդութիւնները մարդկային ընկերութեան կապերը ալ աւելի կ'ամրացնեն, ինչպէս նաեւ կ'ապացուցանեն Միութիւններու պատմական արմատները: «Գոհաբանութեան օրը» պահ մըն է երբ մարդիկ իրար մօտ գալով գաղափարներ կը փոխանակեն, միասնաբար ճաշելով եւ ըմբոշխնելով բերրի հունձքը: Ամէն տարի, այս յատուկ օրին, Պոլսահայ Միութեան Գործադիր Մարմնի Վարչութիւնը երախտագիտութիւն յայտնելու առիթը կ'ունենայ իր ծառայասէր անդամներուն:

Նոյեմբեր 9 2012ի գիշերը, Միութեան Գործադիր Մարմնի Վարչութիւնը կազմակերպած էր տարեկան աւանդական «Գոհաբանութեան Ընթրիքը» Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահին մէջ, ուր ներկայ էին շուրջ 177 անդամներ:

Բացման խօսքը կատարեց Գործադիր Մարմնի խորհրդատու անդամուհի՝ Տիկին Թալին Սարաֆօղլու որ իր ուրախութիւնը յայտնեց բոլորին ներկայութեան համար այսպիսի օրուան մը մէջ, որ «տարեկան ծիսակատարութեան» նման տօն մը դարձած է, միասնաբար ստեղծած ըլլալով հրաշալի ընտանիք մը:

Համադամ ուտելիքներու կողքին, ներկաները ստացան Միութեան «լոկօ» կրող մէկական փորագրուած արոյրէ յուշանուէրներ, նուիրուած Գործադիր Մարմնի Ատենապետ՝ Տիար Գուրգէն Պէրքչանլարի կողմէ: Տեղի ունեցաւ միութեան պատմութիւնը եւ անցնող տարիներու գործունէութիւնները ներկայացնող տեսաերիզի ցուցադրութիւն՝ միութեան տարբեր շրջաններու ձեռնարկներէ առնուած: Ցուցադրութիւնը առիթ մը եղաւ, որ ներկաները տեսնեն ու վերյիշեն Միութեան համար տարուած բեղուն աշխատանքները,(տեսաերիզի պատրաստութիւն՝ Տիար Սարգիս Սալկընի): Ապա ամպիոն հրաւիրուեցաւ ատենապետ Գուրգէն Պէրքչանլարը, որ իր ուրախութիւնը յայտնեց անգամ մը եւս ներկայ ըլլալու այս ձեռնարկին, ըլլալով գլխաւոր առիթ մը շնորհակալութիւն յայտնելու բոլորին, իրենց բարոյական աջակցութիւններուն եւ նիւթական նուիրատուութիւններուն համար, ի նպաստ միութեան բարգաւաճման: Բարի գալուստ մաղթեց ներկայ եւ բացակայ նախկին ատենապետներուն եւ հիմնադիր անդամներուն: Տիար Գ. Պէրքչանլար բացատրութիւն տուաւ Միութեան գործօն անդամներու ծառայութեան տարիներուն համար զարդասեղ ստանալու ծագումին մասին, ինչպէս նաեւ վկայագիրներ ստանալու դրութեան կիրարկման մասին: Ան արտօնութիւն խնդրեց, որ այս աւանդութեան նոր էջ մը աւելցուի, ուր Միութեան Ատենապետը այս առիթով կարենայ ներկաներուն բացատրութիւններ տալ Միութեան ներկայ իրավիճակին մասին: Ան շեշտեց նպատակակէտերն ու պաշտօնները որոնք պէտք է գործադրուին Միութեան Հոգաբարձութեան եւ Գործադիր Մարմնի վարչականներուն կողմէ հետեւեալ ձեւով ամփոփելով զանոնք:

գ Հայրենիքի բարգաւաճում

գ Պոլսոյ հայու ոգիով հայ մշակոյթի տարածում եւ զարգացում

գ Սփիւռքի մէջ հայապահպանման համար աշխատանք տանելու յատկացում

Բացատրութիւն տուաւ ֆոնտերուն մասին եւ յանձնախումբերուն կատարելագործումներուն մասին եւ մի առ մի շնորհակալութիւն յայտնեց բոլորին իրենց յաջողութիւններուն համար: Նմանաւանդ շեշտը դրաւ թէ պէտք է Միութենէն ներս ընդունիլ նաեւ այլ երկիրներ ծնած հայերը ըսելով. «Կարեւորը մեր հայ ըլլալն ու մնալն է եւ պէտք է որ պայքարը ասոր վրայ կեդրոնանայ», ինչպէս նաեւ Միութեան երիտասարդներուն վրայ, որոնց հարկ է պարտականութիւն, պաշտօն եւ աթոռ տալ եւ քաջալերել ու նեցուկ կանգնիլ անոնց, որովհետեւ անոնք պիտի ըլլան այս Միութեան ապագայ առաջնորդները: Տիար Գ. Պէրքչանլար առաջարկեց բոլորը միասնաբար աշխատելու այս Միութեան մէջ ոչ իբրեւ անհատներ սոսկ, այլ՝ իբրեւ հաւաքականութեան անդամներ, պատասխանատուութեան զգացումներով: Զնայիլ, չդիտել Միութեան կեանքին դուրսէն, այլ՝ մտնել անոր դարպասէն ներս եւ աշխատիլ հաւատարիմ սկզբունքներով իբրեւ մէկ ընտանիք:

Այս տարի մեծարուեցան 10, 20 եւ 30 տարուայ ծառայող հետեւեալ անդամները որոնք մէկ, երկու եւ երեք ադամանդեայ ակով զարդասեղներ ստացան միութեան ատե-

Շար.ը էջ 19

## «ԿԱՄՈՒՐՋ ԴԷՊԻ ԱՊԱԳԱՅ» ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐԻ




Շարունակելով Ծուխի կողմէ սկսուած «Կամուրջ Դէպի Ապագայ» աշխատանքը ի նպաստ եկեղեցւոյ նոր համալիրի կառուցման, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի եւ մասնակցութեամբ Թեմիս նախորդ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի, Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպիսկոպոս Նալպանտեանի, Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Թաթուլեանի, Ծխական Խորհուրդի, Տիկնանց Միութեան, "Trust Fund" Յանձնախումբի եւ Ծուխի հաւատացեալներու, Տարեկան Երկրորդ Ճաշկերոյթ-Պարահանդէսը տեղի ունեցաւ Նոյեմբեր 10ի երեկոյեան՝ Hilton La Jolla Torrey Pines Պանդոկին մէջ:

Երեկոյի նպատակին ներածականը կատարեց Գիմպըրլի Հանդ (10 News Anchor and Reporter): Երգուեցան Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Հիմները: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց, ապա իր ոգեւորիչ պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որուն մէջ ըսաւ.-

«Աստուած մեզի հետ է: Մենք պատասխանած ենք Աստուծոյ կոչին կառուցելու նոր եկեղեցին Իր փառքին եւ մեր զաւակներու հոգեւոր վայելքին համար: Եկեղեցւոյ հոգեւոր կեանքին մաս կազմելը յստակ պատգամ մը ունի: Ատիկա աղօթական կեանքն է՝ աճելու համար մեր Քրիստոնէական հաւատքի, Աստուծոյ սիրոյ եւ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի իմաստութեամբ: Այս երեկոյի ճաշկերոյթ-հանգանակութիւնը նոր հանգրուան մըն է մեր հաւատքի կեանքին մէջ: Ձեր յանձնառութիւնն ու զոհողութիւնները չեն կրնար հաւասար նկատուիլ Հայոց Ցեղասպանութեան զոհերուն եւ հազարաւոր արտաքսուած մեր նախահայրերուն հետ, որոնք իրենց կեանքը կորսնցուցին, սակայն բնաւ չկորսնցուցին իրենց սէրը Աստուծոյ հանդէպ եւ դարձան կենդանի խորհրդանիշը յարութեան»:

Սրբազան Հայրը իր բարձր գնահատութիւնը յայտնեց կազմակերպիչ յանձնախումբի Ատենապետ՝ Քէթի Քասարճեանի, ինչպէս նաեւ յայտագրի բոլոր մաս կազմողներուն:

Հանդիսավար Գիմպըրլի Հանդ իր սրտի խօսքը ուղղեց հանդիսականներուն: Ապա Ճաշկերոյթ-Պարահանդէսի Ատենապետ՝ Քէթի Քասարճեան կենսագրական գիծերը կարդաց հանդիսավար Գիմպըրլի Հանդի: Ներկայացուեցան պարեր, ապա տեղի ունեցաւ վաճառք՝ ղեկավարութեամբ Keith L. McLane-ի:

Այս առթիւ Առաջնորդ Սրբազան Հայրը իր գրած պատգամին մէջ կ'ըսէր.-

«Մեր բարձր գնահատութիւնը կը յայտնենք ձեզի, որ միասնաբար կը շարունակէք ձեր սկսած «Կամուրջ Դէպի Ապագայ» ծրագիրը՝ մօտ ապագային սկսելու համար նոր համալիրի կառուցման աշխատանքներուն:

Վստահ ենք, որ նոր համալիրը պիտի ծառայէ Ծուխի հաւատացեալներու հոգեւոր կարիքներուն գոհացում տալու եւ յատկապէս իր բոլոր յարմարութիւններով պիտի ներգրաւէ մեր ներկայ եւ ապագայ երիտասարդ սերունդները:

Մեր սրտագին կոչն է բոլորիդ, որ ձեր կարողութեան համաձայն մասնակցիք նախաձեռնուած նուիրահաւաքին:

Մեր շնորհաւորական եւ յարատեւ յաջողութեան լաւագոյն մաղթանքները կ'եզրափակենք Սուրբ Պօղս Առաքեալէն առնուած հետեւեալ մէջբերումով. «Հոգ մի՛ ընէք, այլ աղօթքներով եւ աղաչանքներով ձեր խնդրանքները գոհաբանութեամբ թող յայտնի ըլլան Աստուծոյ« (Փիլիպ. 4:6)»:

Իր գնահատական խօսքով հանդէս եկաւ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Թաթուլեան: Փակման խօսքը կատարեց Սուրիոյ Մայրաքաղաք Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպիսկոպոս Նալպանտեան:

Ներկաները իր երգերով խանդավառեց Ռապըրթ Ջիլինկիրեան: Իսկ երեկոյի ականաւոր հիւրն էր Մէրի Մըրֆի (Judge on "so You think, You Can Dance."

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌԱԴԻՈ ԺԱՄԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի
երեկոյեան ժամը 10:00–էն 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

# ՄԱՐԴԻԿ ՆՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*ԼԻԼԻԹ ՔԷՀՅԷԵԱՆ*


Acrylic on canvas portrait
by Seeroon Yeretzian

*Ես ամենեւին էլ այն կարծիքին չեմ, թէ առաջին տպաւորութիւնը խաբուսիկ է լինում: Եւ չնայած դրան, երբեմն, նոյնիսկ մեր կամքից անկախ, ժամանակը ստուգում է դրա ճշմարիտ կամ սխալ լինելը: Այդպիսի մի ստուգման էլ ենթարկուել է Վաչէ Սեմերճեանի «Ցիշատակելի դիմաքանդակներ»-ը, որն ամիսներ առաջ (գուցէ եւ տարի, չեմ յիշում), դեռեւս գրքի չվերածուած, կարդացել եմ, հաւանել եւ դրել գրադարակի այն հատուածում, որ, իմ համոզմամբ երկրորդ անգամ թերթելու անհրաժեշտութիւն եմ զգալու:*

*Ժամանակն անցել է առաջին տպաւորութեան վրայով, «Դիմաքանդակներ»-ն արդէն տպագրուել է որպէս գիրք եւ հաստատել դրա ճշմարտութիւնը:*

*Հրապարակագիրը, գրողն ընդհանրապէս, իր գրուածքները հանրութեան ուշադրութեանը ներկայացնելու իրաւունք ունի, երբ ուրիշներին յայտնում է տուեալներ ու տեղեկութիւններ, որոնք ուրիշները չգիտեն եւ որոնք կրում են հասարակական կարեւորութիւն: Սեմերճեանի «Դիմաքանդակներ»-ն այս առումով հետաքրքիր է եւ մեզ խորհելու առիթ է տալիս: Այն խորք ունեցող եւ խորհել տուող պարզութիւն ունի: Ահա Սեմերճեանի «Դիմաքանդակներ»-ի առանձնայատկութիւնը: Պարզութիւն բառը ես միտումնաւոր ընդգծեցի: Եւ ահա թէ ինչու. վերջերս սկսել են ոչ միայն հնարել, այլեւ հիմնաւորել անհրաժեշտութիւնն այնպիսի գրքերի, որտեղ ամբողջ մերկութեամբ ու փոքրութեամբ երեւում է գրքի հեղինակի եսը՝ առանց ժամանակի: Այսինքն հեղինակը խօսում է իր անունից, բայց ո՞վ է լսողը, երբ նրա խօսքում աշխարհ ու մարդ չկայ: Իսկ մենաւոր ու միայնակ եսը չի կարող մարդկային միաւոր լինել: Սեմերճեանին խօսեցնողը նոյնպէս ժամանակն է, որի մէջ է մարդը: Իսկ ժամանակ ասածը օ- րերի, ամիսների, տարիների ու դարերի սոսկական շարան չէ, այլ կեանքն է:*

*Բարեբախտաբար, ժամանակի մէջ մարդու սիրտ է բաբախում եւ ամենուր ու ամեն ինչում նրա կենսագրութիւնն է, նրա մանկութեան ճամբան, նրա ծննդավայրը, նրա խինդն ու տխրութիւնը: Վերը նշեցինք, որ Սեմերճեանին խօսեցնողը ժամանակն է՝ այսինքն, մարդը, քաղաքացին, նրա գործունէութիւնը:*

*Վաչէ Սեմերճեանի նպատակը չի եղել տալ գրքում տեղ գտած հեղինակների, մշակութային, կուսակցական եւ հասարակական գործիչների բոլոր կողմերի գնահատականը: Ո՛չ: Դիմաքանդակը որեւէ հեղինակի կամ գործչի ստեղծագործական կամ հասարակական գործունէութեան ամբողջական բնութագիրը մէկ յօդուածի սահմաններում ներկայացնելու փորձ է՝ էական կողմերի ընդգծման եւ տուեալ անձի գրական եւ հասարակական գործընթացում զբաղեցրած տեղի ու դերի մատնանշումով: Այս դէպքում կարեւոր է ոչ թէ այդ գործիչների, հեղինակների առանձին գործերի վերլուծումները, այլ ընդհանրացումներ կատարելը: Սա հէնց այն է, ինչն արուած է Սեմերճեանի «Դիմաքանդակներ»-ում, եւ սակայն, այստեղ հաւաքուած գրութիւնները դիմաքանդակներ լինելուց զատ, ունեն այնպիսի արժէքաւոր դիտարկումներ, որ շօշափում են այդ գործիչների մի շարք բնութագրային յատկանիշներ, որոնք կարեւոր եւ սկզբունքային նշանակութիւն ունեն նրանց ընդհանուր գնահատման համար, սակայն մինչեւ այժմ բաւարար ուշադրութեան չեն արժանացել: Բերենք օրինակներ. «Անդրանիկ Անդրէասեան՝ կուսակցական գործիչը եւ վաստակաւոր խմբագիրը» վերնագրի ներքոյ կարդում ենք. «Աւելի քան յիսուն տարի, Անդրէասեան գրեց եւ արտադրեց՝ իր սերնդակիցներուն եւ վաղուան սերունդներուն կտակելով քաղաքական հարուստ վաստակ մը: Ցարդ լուրջ փորձ մը իսկ չէ կատարուած հաւաքելու եւ մաքրագտելէ ետք՝ հրատարակելու Անդրէասեանի հրապարակագրութեան լաւագոյն յօդուածները գիրքի մը մէջ»: Կամ նոյն գրութեան մէջ կարդում ենք. «Անդրէասեան եւ Գլըճեան իրենց կողմէ գրուած կենսագրութիւններուն մէջ երբե՛ք չեն յիշած թէ ե՛րբ եւ ու՛ր սորված են հայերէնը, զոր չքեղօրէն գործածած են իրենց գրականութիւններուն մէջ: Ալեք Գլըճեան ինծի յայտնած էր թէ Թրքախօս եղած է մինչեւ 16-17 տարեկանը. ապա՝ բռնի տարագրութենէն Տէօրթ Եօլ վերադառնալէ ետք միայն սորված է հայերէնը՝ մինչեւ 1920 քսան տարեկանը՝ երբ Միացեալ Նահանգներ կը մեկնի արդէն Նիւ Ճըրզի հասած ազգականի մը միջնորդութեամբ: Իսկ Անդրէասեանի հայերէնին ծանօթացումը միշտ ալ առեղծուած պիտի մնայ՝ եթէ որբանոցներու մէջ սորված հայերէնը չընդունինք որպէս լուրջ ուսումնառութիւն»:*

*Այս եւ նմանատիպ շատ այլ հարցերի մասին է մատնանշում Սեմերճեանը «Դիմաքանդակներ»-ում, որոնց քննութիւնը կը նպաստի աւելի խոր բացայայտելու մեր այս գրողների, հասարակական գործիչների աշխարհայեացքի եւ գեղարուեստական մեթոդի, նրանց գրական առնչութիւնների եւ ինչու չէ վարպետութեան կարեւորագոյն կողմերը:*

*Ցիրաւի, հրապարակագիր Սեմերճեանը նոր տեսանկիւնից եւ հետաքրքիր կերպով է քննել գրքում տեղ գտած հեղինակների, գործիչների ստեղծագործութիւնների, նրանց բնութագրային նրբերանգների հանգուցային հարցեր, որոնք գրապատմական ու տեսական սկզբունքային նշանակութիւն ունեն եւ մեծապէս նպաստում են նրանց ստեղծած համազգային արժէքների նորովի գնահատմանն ու իմաստաւորմանը: Այո, նրանց գործերը ժամանակի ընթացքում մեր առջեւ կը բացեն համազգային արժէքի նոր կողմեր, կը մղեն գրականագիտական միտքը հետազօտական նոր ուղիների որոնման:*

*«Դիմաքանդակներ»-ում Սեմերճեանը մեկնաբանում է նաեւ հայ գրականութեան երեւոյթներ, ընդ որում մեկնաբանում է կեանքի գեղագիտութեան դիտակէտից, հիմնական շեշտը դնելով գեղարուեստի եւ հասարակական կեանքի կապի վրայ: Դա գեղարուեստը կեանքի դիրքերից, յուզական ներգործութեան աստիճանով եւ սոցիալական խորքերով քննելու մօտեցումն է: Այսպէս, նկատի ունենալով Սարգիս Վահագնի գեղարուեստական ժառանգութիւնը, ինչպէս նաեւ նրա քաղաքացիական դիմանկարը, Վաչէ Սեմերճեանը նկատում է, որ. «Թէրեւս հայրենասիրութեան արմատներուն ուղղուած այդ որակումէն անդին պէտք է փնտռել Սարգիս Վահագնի իրաւ միտումնը, վաստակին բնոյթը եւ իմաստը՝ գնահատելու համար ամբողջական գրողը: Իր ստեղծագործական երկերուն մէջ զարգացած ընդվզումն ու պայքարը՝ պայքարն է կեանքի անարդա- րութիւններուն, հասարակական կեանքի վնասակար եւ ժամանակավրէպ ըմբռնումներուն դէմ: Ընդվզումի տարազով ներկայացող պայքարի առաջատարներէն դարձաւ ան, միջին արեւելեան հասարակութեան պատմաքաղաքական այնպիսի պահուն, երբ արաբն ու հայը իրենց հասարակական արժանապատուութեան վերականգնումի դժուարին գուպարին մէջ բռնուեր էին»:*

*Հեղինակի բնորոշումը իսկապէս ճիշդ է այնպիսի մի լրջախոհ եւ շրջահայեաց գրողի համար, ինչպիսին Սարգիս Վահագն է, եւ անկեղծ ասած մեծ արիութիւն ու խոր հայեացք է պէտք ճիշդ գնահատելու գեղագիտական իրադրութիւնը, կռահելու զարգացման հեռանկարները, քանզի ժամակակից կեանքի ռացիոնալիզմը կասկածի տակ է դրել դարերի ընթացքում ժողովրդի մէջ բիւրեղացած բարոյական արժէքների աւանդական ըմբռնումները եւ մարդը մարդուն կապող համերաշխ բարոյականութեան աննիւթական ու չգրուած օրէնքները ճեղքուածք են տուել եւ դուրս են շպրտւում ժամանակակից կեանքի կենսափորձից:*

*Հրապարակագրի արգասաւոր որոնումների, նրա հետաքրքրութիւնների, հանդարտիկ պատմելաոճի, գրագէտ հայերէնի ու գրական բարձր էթիկայի վառ վկայութիւնն է Վաչէ Սեմերճեանի այս գիրքը, ուր կան նաեւ հետաքրքիր յուշեր, որոնցից յատկապէս մէկը՝ նուիրուած Բենեամին Նուրիկեանին, արժանի է յիշատակութեան: Մէջբերենք մի հատուած կրճատումներով. «Դուռ մը կը բացուի: Ներսն ենք: Նեղ առանձնասենեակ մը, ձախին՝ անկողին մը ու մէջը՝ նստած եւ ճաղատ գլուխը ձիգ վեր բռնած մարդ մը, վիզին մկանները պրկուած, անշարժ, սֆինքսը յիշեցնող բան մը ունի:*

*Տիկինս եւ ես արձանացած ենք... ...Մե՛ր ճանչցած Նուրիկեա՞նն է սա ողջ մեռելը, անտարբեր՝ բացուած դուռին եւ օտար ներկայութեան՝ ինք իր հետ կը խօսի վերացած:*

*Խարխլուած յիշողութիւնը հին կտոր մը յայտնաբերած էր կ'երեւի ու կը փորձէր իր խօսելիքը պատրաստել:*

*- Այբ, Բեն, Գիմ,*
*Դա Եչ, Զա,*
*Է, Ըթ, Թօ*
*Ժէ, Ինի, Լիւն*
*Խէ, Ծա, Կեն ...*

*Խեղդուող լռութիւն մը: Ապարդիւն փնտռտուք մը:*

*Խէ, Ծա, Կե՜ն... յետո՜յ, յետո՞յ ինչ կու գար...*

*Աչքերը՝ միշտ անծանօթ կէտի մը յառած է...*

*Երկուքս՝ շշմած, գլինք կը դիտենք: Կը վախնամ միջամտելէ:*

*Շար.ը էջ 19*


ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ
ST. GREGORY ARMENIAN CHURCH
Geragos BANQUET HALL OF PASADENA
NEWLY REMODELED



Now ready to host your
• Wedding
• Baptism
• Anniversaries
• All other happy & sad events.
• Հարսանիք
• Մկրտութիւն
• Տարեդարձ
• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:

ՎԱՀԷ 562-715-8730 VAHE

Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք

## ԳԵՂԱՄ ՎԱՆԻԿԵԱՆ

*Շարունակուածէջ 7–էն*

*կ՚անդրադառնայ նաեւ յետ-սահմանադրական Օսմանեան կայսրութեան երրորդ երեսփոխանական ընտրութիւններուն եւ կը քննադատէ Պատրիարքարանն ու հայ կուսակցութիւնները: Իրականութիւնը այն էր, որ նախքան ընտրութիւնները, Պատրիարքարանին շուրջ կը կազմուի Միջկուսակցական Համերաշխական Մարմին մը: Համերաշխականը կոչ կ՚ընէ ժողովուրդին անտեսել ընտրութիւնները եւ չմասնակցիլ անոնց: Հայութիւնը կ՚ընդառաջէ կոչին եւ զանգուածային մասնակցութիւն չի բերեր ընտրութեան: Սակայն, Բ. կարգի ընտրողներու ընտրութենէն ետք, ՀՅԴ-ի առաջարկով, Համերաշխականը կը թելադրէ պատրիարքին հայ երեսփոխաններու անուններուն շուրջ բանակցութիւններ ունենալ կառավարութեան (իմա՝ Իթթիհատին) հետ: Վանիկ այս կը գտնէ վարկաբեկիչ արարք ու կը գրէ. «Որեւէ երկրի մէջ ընկերվարական կուսակցութիւն մը բանակցութիւններ չի վարեր կառավարութեան հետ՝ ընտրական խնդիրներու շուրջ, ընդհակառակը կը պահանջէ, որ կառավարութիւնը չմիջամտէ ընտրութիւններուն, որոնք պէտք է կատարուին ժողովուրդին ազատ քուէով: Սակայն ի սէր համերաշխութեան եթէ ձեռնպահութիւն յայտարարեցինք, կ՚ընդունիմ իբրեւ գիջողութիւն մը: Բայց անկէ վերջ երբ երկրորդ կարգի ընտրողները «ընտրուեցան» առանց ընտրական պայքարի ու ժողովուրդի մասնակցութեան, անկէ վերջ երբ համերաշխական սեղանի անդամներէն մէկը - Հ. Յ. Դաշնակցութիւնը - զանազան պատճառներով մասնակցութեան հարցը կը բերէր, հնչակեանները պէտք էր պնդէին չմասնակցիլ, որովհետեւ Համերաշխականը պատճառ եղաւ, որ հայ ժողովուրդը չմասնակցի ընտրութիւններուն: Թալաթ պէյ հրամայէ եւ հնչակեան երեսփոխա՞ն ընտրուի: Ալ ո՞ր ընկերվարականն է, որ պիտի կրնայ ըսել, թէ ես իմ կուսակցութեան ներկայացուցիչն եմ, քանի որ իր կուսակցութեան անդամները ընտրութեան չեն մասնակցած: Մեր քաղաքական կուսակցութեանց Պոլսոյ վարիչները եղան անջիղ ու խակ: Պատմական սխալ մը գործուեցաւ», ու հոս, որպէս եզրակացութիւն կը հնչէ պատմութեան փոթորիկներուն դիմացող Վանիկի ամօթանքը՝ «Բիւր ամօթ Իթթիհատի գործակիցներուն» (10):*

*Վանիկ, իր համարձակ գրիչին կողքին, ժամանակակիցներուն կողմէ կը նկարագրուի որպէս անկեղծ, անձնուէր, համեստ... եւ հպարտ: «Անկեղծ՝ ոչ միայն դէպի իր մօտիկ, կուսակցական ընկերները, այլ նաեւ իր ամբողջ շրջապատը, անկեղծ նոյնիսկ գաղափարական հակառակորդներու հանդէպ, որոնց հետ իր ունեցած յարաբերութիւններու ընթացքին անիկա միշտ մնաց իր գաղափարական բարձրութեան վրայ, հեռու կուսակցական նեղմտութենէ եւ մոլեռանդութենէ: Ահա թէ ինչո՞ւ համար զինքը ոչ միայն յարգեցին, այլ նաեւ սիրեցին անխտիր բոլոր անոնք, որոնք իրեն հետ շփում ունեցան կամ ծանօթացան» (11): Վանիկ նաեւ հպարտ էր, բառին «արժանապատուութեան» իմաստով: «Այս առթիւ արժէ յիշատակել, որ Վանիկը չուզեց նպաստաւորուիլ Ազգային Պատրիարքարանէն, որ այն ատեն գաւառացի եւ կարօտ ուսանողներուն տարեկան քսան ոսկի գումար մը կու տար նպաստելու համար անոնց ուսման: Գեղամ վիրաւորական կը համարէր նպաստընկալի դիրքին մէջ մտնել, մինչ աստին իր ծանօթներէն եւ հայրենակիցներէն շատեր, առանց վայրկեան մը իսկ տատամսելու, կ՚օգտուէին ազգային այդ օժանդակութենէն, հակառակ անոր որ բաղդատմամբ Գեղամի, շատերը ընտանեկան լաւագոյն պայմաններ արդէն ունէին: Ասիկա Գեղամի նկարագրին բնորոշ գիծերէն մէկն էր միայն: Գեղամ, նիւթական խնդիրներու մէջ նոյնքան հպարտ էր նաեւ դէպի իր ընկերները: Նոյնիսկ իր ամենամտերիմ ընկերները չէին կարող նիւթապէս օգնել իրեն: Անիկա կը շիկնէր, կը ջղայնանար եւ նոյնիսկ հոգեկան տագնապալի յոյզեր կ՚ունենար: ... Երեւակայեցէք, որ կը պատահէր երբեմն երբ անձնական գործածութեան համար մէկ ղրուշ իսկ չէր ունենար գրպանը, նոյնիսկ իր սնունդին կամ կամուրջը անցնելու համար: Գեղամ բնաւ չէր մտաբերեր, թէ ձախ գրպանին մէջ դրամ կայ, եւ հետեւաբար կարելի է ժամանակաւորապէս անկէ գործածել եւ դարձեալ վերադարձնել: Գեղամ կ՚անգիտանար կուսակցական դրամի գոյութիւնը եւ անկէ տասը փարա իսկ չէր ծախսեր, եթէ նոյնիսկ վստահ ըլլար, թէ կէս ժամ վերջ անձնական դրամ պիտի ստանար եւ հետեւաբար պիտի կրնար պակասը լրացնել: Կարծեմ թէ Գեղամի նկարագրին այս կողմը անհաւատալի եւ առասպելական պիտի թուի շատ շատերուն, մանաւանդ ներկայիս, երբ ազգային, պետական գումարներու ծախսումը նոյնիսկ տեսակ մը աչքաբացութիւն համարողներ չեն պակսիր» (12):*

*Վանիկ, երկխուղածութեան հասնող սէր ու յարգանք կը տածէր դէպի Փարամազը: «Գաղափարի միեւնոյն տաճարին երկրպագող այս երկու վարդապետները սակայն, Վանիկն ու Փարամազը, իրենց Աստծոյն միեւնոյն աղօթքը կ՚ընէին, մէկը մեղմ ձայնով, մրմունջով, ու միւսը՝ որոտալից, գուցէ սպառնական:*

*Իսկ իրենց պատգամը նո՛յն չեշտն ու ոգին կը կրէր՝ ինչպէս որ էր իրենց աղօթքը: Միեւնոյն տաճարին մէջ եւ միեւնոյն գաղափարին համար երկու հակոտնեայ ուժեր, մէկը իր հեզութեամբ աստուածային ու զմայլելի, իսկ միւսը իր խրոխտութեամբ բռնկող հրդեհ մը յաճախ: Վանիկը յաւիտենական ներողը ու բարեբարոյ, ու Փարամազը հաւատացեալ ոխերիմ մը բոլոր չարիքներու, ու դաժան մերկացնող մը՝ ամէն կեղծիքի» (13):*

*Ու կը պատահի նաեւ այն, որ երկու ընկերները կը մտնեն հրապարակային բանավէճի մէջ: Փարամազ ՍԴՀԿ Կ. Պոլսոյ պաշտօնաթերթ «Նոր Աշխարհ» օրաթերթին մէջ յորդոր կու տայ հնչակեան երիտասարդութեան՝ աւելի գործակցիլ Թուրք աշխատաւորական-ընկերվարական շարժումներուն հետ: Վանիկ, նոյն թերթին մէջ կը պատասխանէ իր աւագ ընկերոջ, որ այդպիսի փորձեր կատարուած են, սակայն Թուրք ընկերվարականները լուրջ չեն: Ան կը յիշեցնէ Օսմանեան Սոցիալիստական Կուսակցութեան (որ անդամ էր Սոցիալիստական Միջազգայնականին) պաշտօնաթերթ «Իշթիրաք»ի պարագան, որ բաց նամակ գրած էր Ք. Մարքսին... անոր մահէն 25 տարի անց» (14):*

*Միւս կողմէ սակայն, Վանիկի կապերը ընկերվարական շարժումներուն հետ, միայն Օսմանեան կայսրութեան սահմաններով չէր սահմանափակուեր: Ասոր լաւագոյն վկայութիւնը անոր մահէն ետք ռուս ընկերվարական եւ Տումայի երեսփոխան Արշեւ Սուրաքովի յօդուածն էր զուիցերիական «Պերկեր Թակվախտ» թերթին մէջ, ուր ան վեր կ՚առնէր Վանիկի հակապատերազմական համոզումները: Այս յօդուածին տուեալներուն վրայ, 1915 Օգոստոս 16-ին, Իտալիոյ Սոցիալիստ Կուսակցութեան օրկան «Աւանդի»ն իր «20 Հայ Ընկերվարականներու Կախաղան Բարձրացուիլը Թուրքիոյ Մէջ» խորագրեալ յօդուածին մէջ Վանիկը կը ներկայացնէ որպէս «հանճար գաղափարախօս եւ հռետոր» (15):*

*Համաշխարհային Ա. Պատերազմին, Վանիկ կը զօրակոչուի բանակ ու կը հետեւի սպայից դպրոցի զօրավարժութիւններուն: Կը ձերբակալուի զօրանոցին մէջ ու կը միանայ Քսաններու փաղանգին: «Ու Վանիկի մահը եղաւ հպարտ ու գեղեցիկ, ինչպէս էր կեանքը: Ան մեռաւ քաջութեամբ, ինչպէս վայել է հերոսին՝ արհամարհելով մահը, գամելով դատապարտութեան անարգ սիւնին՝ իր դահիճները, որ միամտութիւնն ունէին սպաննելու իր ըմբոստութեան անմահ գաղափարը, իր դիւրաբեկ ու փաղանցուկ մարմնին մէջ: Ես կրնամ, ուրեմն, վկայել հոգիովս, որ անմեղ էր Վանիկը, եւ իր դատաւորները բարձրացնելով զինքը կախաղան, գործեցին անարդարութիւններուն էՆ անարգն ու էՆ վայրագը» (16):*

*********

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1) Եդուարդ Ջոփուրեան, «Քսան Կախաղանները», Հրատ. «Երկիր» մատենաշարի թիւ 1, Կ. Պոլիս, 1921. Հրանդ Գալիկեան «Գեղամ Վանիկեան», էջ 47:
2) «Արարատ», 2011-ի նոր տարուան բացառիկ, Ե. Ճէրէնեան, «100 Ամեակ «Կայծ Ուսանողական Միութեան»:
3) «Կայծ», 1911, թիւ 5, Օգոստոս:
4) «Կայծ», 1911, թիւ 8, Նոյեմբեր. «Կայծի Թիւ 6-ի Հարցարանին Պատասխանները»:
5) «Կայծ», 1913, թիւ 10-11, Ապրիլ-Մայիս:
6) «Կայծ», 1914, թիւ 12, Յունիս:
7) «Հնչակ», 1913, Յունուար:
8) «Հնչակ», 1913, Փետրուար:
9) «Հնչակ», 1913, Ապրիլ-Մայիս:
10) «Հնչակ», 1914, Մայիս:
11) Եդուարդ Ջոփուրեան, ... էջ 52:
12) Նոյն, էջ 53-54:
13) Ե. Ջոփուրեան, ... Ա. Սիրվան, «Քսաններէն Երկուքը», էջ 118-119:
14) «Նոր Աշխարհ», 1912, 7/20 Սեպտեմբեր:
15) Emanuel Aliprandi, «1915, Cronacadi Un Genocidio», pub. My Book, 2009, Italy: «Արարատ», 2010, Յունիս 17. «Քսան Կախաղաններու Միջազգային Արձագանգէն»:
16) Ե. Ջոփուրեան..., Տիգրան Զաւէն, «Մեր Վերջին Մարտիրոսագրութեան Նախավկաները - Վանիկի Յիշատակին», էջ 109:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor



Մեծահասակներու և մանուկներու Քայրոփրաքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն



Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

## ՆԵՐԿԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԻ ԽՆԴԻՐԸ

*Շարունակուած էջ 2-էն*

*մենք հրաժարուեցինք հասկանալ, թէ ինչ է կատարուել: Մաշտոցի պուրակի մեթոդական փորձը մոռացուեց, ու նորից անցանք իշխանութիւններից պահանջելուն-խնդրելուն՝ նեմեց պատժել խնդրելուն, դատաւորների ձեռաւնոցին հանդուրժելուն եւ այլն:*

*Պարզաբանեմ, որ չնայած ֆորմալ ձեւակերպումներին, Մաշտոցի պուրակում ՉԷՐ ՊԱՀԱՆՋԻՈՒՄ, այնտեղ իշխանութիւններին ԹՈՅԼ ՉԷՐ ՏՐԻՈՒՄ անել իրենց ուզածը:*

*Սա սկզբունքային տարբերութիւն է: Դատարանից արդարութիւն պահանջելը եւ ինչ որ բան իշխանութիւններին անել չթոյլատրելը հակառակ բեւեռներ են: Ինչ որ է, գանք նախագահական ընտրութիւններին:*

*Եթէ գիտենք, որ դրանք կեղծուելու են, ապա ինչու հենց այսօրուանից բոլորովս քայլեր չենք ձեռնարկում դրա դէմն առնելու եւ աւելին՝ հանրութեանը ծառայեցնելու համար: Ասենք նրան կրթելու, նոր որակի, քաղաքացիական նոր մակարդակի բերելու համար:*

*Սպասուող կեղծիքը կանխել չենք կարող, բայց հօ կարող ենք ընդդիմադիր ցանկացած թեկնածուի կարճ ու կոնկրետ՝ հիմիկուանից ասել-բացատրել, որ յարգելիս, եթէ քեզ առաջադրեցիր, կամ էլ «առաջարկեցին» եւ դու «համաձայնուեցիր», մասնակցեցիր այս կեղտոտ խաղին, ապա պետութեան, ազգի ու ժողովրդի դաւաճան ես:*

*Ապացուցիր, որ յաղթելու ես, գանք ազգովի քեզ ձայն տանք, բայց եթէ դու ոչ մի շանս չունես, ինչու ես մասնակցում բլեֆին, ինչու ես լեգիտիմացնում էս իշխանութիւններին, որոնք կէս ժողովուրդ են արտաքսել երկրից ու արագօրէն քանդում են այն: Սա այն հարցն է, որին ոչ մի թեկնածու ու նրան սատարող՝ պատասխան չունի:*

*Այսինքն մեթոդական առումով արդէն իսկ յաղթանակի տանող մօտեցում է սա:*

*Իսկ որն է քայլը, որով հնարաւոր է իրեն խողովակի տեղ դրած այդ ընդդիմադիր թեկնածուին կարգի հրաւիրել:*

*Հենց այս յօդուածը այդ կարգի մի քայլ է: Յաջորդ քայլերով էլ կարելի է քննարկել համազգային բոյկոտի խնդիրները, եւ եթէ նման մօտեցման գան այլ մարդիկ էլ, մասնակցեն խնդրի քննարկմանը, տարածմանը, ապա կը գոյանայ հանրային մի ստուար շերտ, որը իրօք առաջադրուող թեկնածուներին դաւաճանութիւնն աւելի տեսանելի, շօշափելի ու հրապարակային կը դարձնի, նրանց կը պարտադրի դուրս գալ խաղից եւ բոյկոտն էլ կ՚ապահովի:*

*Պարզ է, որ հենց այս պահին, այս տողերը կարդացողների մեծ մասը կը մտածի, թէ մէկ է, առաջադրուողն առաջադրուելու է, կեղծողը-կեղծելու, ես ոչ մի բան էլ չեմ կարող փոխել եղած դրուածքներում, հետեւաբար խօսելն էլ աւելորդ է:*

*Այ սա այն խնդիրներից է, որի մասին հենց ասելիքս է: Մարդիկ նախորդ փորձերի յուսահատական արդիւնքների մէջ են ու ոչ մի կերպ չեն պատկերացնում, որ դա ոչ միայն փորձանք է եղել, այլ կարող է նաեւ ուսումնառութեան աղբիւր ծառայել:*

*Եւ այս հնարաւորութիւնը հանրութեանը բացատրելու, տեղ հասցնելու խնդիրը քաղաքական այրերի խնդիրն է, որը նրանք կուրօրէն շարունակում են չտեսնել:*

*Հարց լուծելու իրաւունքի տէր դառնալու համար մարդը պէտք է ինքն իր կամքը կարողանայ թելադրել հակառակորդին: Պարզեցնեմ՝ ՈՉ ԹԷ ԽՆԴՐԵԼ հակառակորդից, ԱՅԼ ԹԵԼԱԴՐԵԼ նրան:*

*Ներկայ քաղաքական պահի ամենակարեւոր թելադրանքի հնարաւորութիւնը դա գալիք նախագահական ընտրութիւնները բոյկոտելն է:*

*Չմասնակցելն ինքնին եւ վերաբերմունք է եւ գործ: Դու ցոյց տուր քեզ հենց դրանով: Ոչ թէ ձայնդ սպառիր սխալ, կեղծ կամ անյոյս թեկնածուի վրայ, այլ պահիր այն քո մօտ 5 տարի, եւ ամէն մի մէջտեղ ընկածին, որը երբեւէ կը խօսի պետութեան անունից, կամ քո դէմ, դէմ արա իրեն, որ ինքնակոչ է, յանցագործ ու ուզուրպատոր:*

*Մի կարծիր, թէ իշխանական էս խղճուկ հաւաքածոն ունակ է ցանկացած վերաբերմունքի պայմաններում գոյութիւն ունենալու: Դրանք վախից հիմա արդէն թիկնապահ բանակների պաշտպանութեան տակ են տանից դուրս գալիս: Նման ոչ-ընտրութիւններից յետոյ կ՚ընկնեն հոգեկան խանգարումների մէջ էլ, որովհետեւ գիտեն, որ ցանկացած հայ, ներառեալ նաեւ իր գրպանի յոյսին եղած հաստագլուխը, ատում է իրեն:*

*Յաջորդ քաղաքագիտական տգիտութիւնը՝ դա լայն ֆրոնտով պայքարի գնալն է, այսինքն վստահութիւն-մտայնութիւնը, թէ էս էլ կ՚անենք, էս էլ ի նկատի կ՚ունենանք, էս էլ է կարեւոր: Այսինքն եղած ուժերի փոշիացումն ու մարդկանց ապակողմնորոշումը:*

*Եթէ կայ գլխաւոր կիզակէտային դաշտ, խնդիր, ապա չի կարելի որեւէ այլ հարցի մասին նոյնիսկ խօսել, կամ մտքում ունենալ: Ռեսուրսներն այնքան սուղ են, որ նրանք պէտք է տրամադրուեն միայն գերագոյն ճակատին, որը ներկայ պահին, ԲՈՅԿՈՏՆ է:*

*Ես կարծում եմ, որ բոյկոտը կարելի է նոյնիսկ ճոխացնել մի էլեգանտ քայլով: Շատ լաւ գիտակցելով, որ ոչ մի շանս չունեն, 2-3 կին կարող են ինքնառաջադրուել, եւ հանրութեան հաւաքած գումարներով մասնակցել ընտրարշաւին: Բազմաթիւ անգամներ նրանք կը գնան իրար դէմ հետ դեբատների, կը քննարկեն ամենատարբեր հարցեր, եւ դրանով կը կրթեն մարդկանց, ցոյց կը տան իրենց ու եղած տղամարդկանց վիհային տարբերութիւնները:*

*Բայց եւ նրանց օգտին քուէարկութիւնը եւս պէտք է ենթարկուի գլոբալ բոյկոտի: Եթէ նրանցից ոեւէ մէկը յանդգնեց իր օգտին ձայն խնդրել, ապա նրան էլ պէտք է համարել որպէս ներդրուած ու ոճրագործ խաղի մասնակից:*

*Ամէն դէպքում, ես կարծում եմ, որ հիմա կան նման որակների մի քանի կանայք, ովքեր կարող են գնալ նման քայլի: Դա կը լինի նաեւ տիրող գենդերային անհաւասարութեան, հանրային զառամեալ մտածելակերպերի եւ յետամնացութեան դէմ՝ այս պահի համար խիստ կարեւոր դեմարշ-մանիֆեստ:*

*Եկէք չլայնացնենք ու չկազմաքանդենք քաղաքացիական պայքարի ճակատը ու թուացեալի ետեւից չգնանք: Կայ կոնկրետ խնդիր, որն այս պահին ամենակարեւոր ու ամենայարմարն է՝ իւրաքանչիւրիս իրաւունքի տէր, սուբիեկտ, հարց որոշող դառնալու խնդիրը:*

*Յիշենք՝ ամէն պահի կայ միայն մէկ խնդիր: Ձեւակերպենք դրա մեթոդական անելիքը, հետեւողական անենք միայն դա եւ յաղթանակը չի ուշանայ:*

*Եթէ այս մօտեցումը իրապէս հասկացուի ներկայ երեւելիների կողմից, մատուցուի հանրութեանը, լայնօրէն քարոզուի ու տարածուի, ապա եղած օլիգարխիկ բեսպրեդելից հետք չի մնայ շատ կարճ ժամանակում: Յիշենք, որ կեղծիքի պայմաններում ընտրութեան մասնակցելը համագործակցութիւն է իշխանութիւնների հետ: Եւ թող ամէն մէկն իրեն հենց այս հարցը տայ՝ թէ արդեօք իրապէս հենց դա է ուզում:*

*«ԼՐԱԳԻՐ»*

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

*Մի ոմն բարձր կը գնահատէ «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը եւ ուղղութիւնը: Առ այդ կը նուիրէ $100 տոլար «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

*Տիկ. Ժենիա Սավատեան կը շնորհաւորէ Ս.Դ.Հ.Կ.ի 125 ամեակը եւ անոր անդամ-անդամուհիներուն կը մաղթէ անսպառ ուժ եւ կորով:*

*Առ այդ $50 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:*

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

*Տիկ. Արմինէ Նալպանտեան կը շնորհաւորէ Ս.Դ.Հ.Կ.ի 125 ամեակը, մաղթելով նորանոր վերելքներ եւ յաջողութիւններ:*

*Առ այդ $100 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:*

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ՊԵՏՐՈՍ ՍԷՖԷՐԵԱՆ սրտի վիրաբուժութեան յաջող գործողութեան մը ենթարկուելէ ետք այժմ տուն փոխադրուած է ապաքինման շրջանը բոլորելու համար: Այս առթիւ ՍԴՀԿ-ի «Սապահ Գիւլ» մասնաճիւղի վարչութիւնը շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իր սիրելի անդամին:*

### ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
### ԿՐԹԱՆՊԱՍՏ ՀԱՃԸՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը յառաջիկայ տարեշրջանին համար կրթանպաստ պիտի տրամադրէ միջնակարգ, երկրորդական եւ համալսարանական ուսման հետեւողներուն: Դիմողները պէտք է ըլլան հաճընցի ծնողներու զաւակ եւ շարադրութիւն մը կցեն իրենց յառաջիկայ ծրագիրներու մասին:

Թեկնածուներէն կը խնդրուի մեզի հետ հաղորդակցիլ հետեւեալ էլեկտրոնային հասցէով՝ unionofhadjin@gmail.com

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**


## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

**massispost.com**
**daily news updates**

## ԴՈԿՏՈՐ ԱԲԷԼ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*լոր հատուածներ ցոյց է տրւում, որ «ամպ»-ն արտայայտում է Աստծու խորհրդաւոր ներկայութիւնը: Այս գաղափարն արտացոլուել է նաեւ մեր ծիսական կեանքում. եկեղեցիներում սուրբ արարողութիւնների ընթացքում գործածուող բուրվառի ծուխը խորհրդանշում է ամպի պատկերաւոր նմանութիւնը: Անդրադառնալով Յիսուսի մարդեղութեան խորհրդին՝ հեղինակն Աւետարանից բերուած վկայութիւններով ցոյց է տալիս, որ Աստուածորդու համար նոյնիսկ իր երկրային կեանքի ընթացքում ,գոյութիւն չունին ժամանակի եւ տարածութեան սահմանափակումներ»: Նա կարող է միշտ եւ միաժամանակ ներկայութիւն դառնալ այնտեղ, ուր իր կարիքն ունենք, այնտեղ, ուր տալիս ենք իր անունը, զգում, հետեւում եւ հաւատում իրեն:*

*Գրքի վերջին՝ «Յարութեան մաղթանք եւ աղերս», գլխում հեղինակը խօսում է Տիրոջ գերեզմանի մասին, որը մահուան ու յարութեան սրբազան խորհրդանշանն է, իսկ գերեզմանին նստած աւետաբեր հրեշտակի «այստեղ չէ, այլ յարութիւն առաւ» խօսքը «Քրիստոնէական կեանքի փիլիսոփայութեան գեղեցիկ եւ անպարտելի կարգախօսը» (էջ 107): Հեղինակը մեզ յորդորում է երբեք չհուսահատուել, չկորցնել լաւատեսութիւնը եւ ամուր հաւատքն Աստծու հանդէպ, որը լոյսի եւ ճշմարտութեան աղբիւրն է: Աբէլ քահանայ Մանուկեանը ներկայացնում է Տիրոջ գերեզմանի մօտ իր ունեցած յուզիչ եւ հոգեպարար ապրումները:*

*Ընթերցելով Աւետարանը՝ շատ բառեր եւ արտայայտութիւններ սովորական ենք ընդունում, մինչդեռ «յաճախ պարզ ու փոքրիկ թուող վկայութիւն մը կրնայ աստուածաբանական լայն տարածք ունենալ» (էջ 93): Եւ միայն աստվածաբանական խորաթափանց միտք եւ հոգեւոր ներշնչանք ունեցողը կարող է նկատել այդ «փոքրիկ», բայց խորը վկայութիւնները: Օրինակ՝ «վատասիրտ» (էջ 24), «շաղփաղփութիւն» (էջ 28), «երկուանալ» (էջ 31), «աշակերտել» (էջ 47), «հովուել» (էջ 56. այս դէպքում վերլուծւում է նաեւ յունարէն համարժէքը), «գործակցել» (էջ 87), «տեսնել» (99) բառերը, ինչպէս նաեւ մի շարք արտահայտութիւններ գրաբար բնագրի հիմքի վրայ նախ բանասիրական, այնուհետեւ՝ աստուածաբանական խորը եւ հետաքրքրական մեկնաբանութիւնների են արժանանում:*

*Շատ կարեւոր է, որ հեղինակը, սնուելով հայ միջնադարյան աստուածաբանական մտքի ակունքներից (մէջբերումներ կան Ժամագրքից, Մաշտոց ծիսամատեանից, Հաւատոյ Հանգանակից), ստեղծագործել, աստուածաբանել է 21-րդ դարի ընթերցողին լսելի եւ հասկանալի խօսքով եւ մտքով: Ուշագրաւ են յատկապէս համեմատութիւններն ու ընդհանրութիւններն աւետարանական կերպարների եւ ժամանակակից մարդու միջեւ, այնպէս որ կարծէք ընթերցողն էլ հեղինակի հետ միասին դառնում է Աւետարանում պատմուող իրադարձութիւնների ականատեսն ու մասնակիցը. այդ իրողութիւններն էլ ոչ թէ զուտ պատմութիւն, այլ իրականութիւն են դառնում մեր կեանքում: Իսկ միջնադարեան հայ մեծ մանրանկարիչների՝ Թորոսի Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Ծերունի, Մոմիկի, Թորոս Տարոնացու եւ մյուս ծաղկողների մանրանկարները զարդարում են այս խորիմաստ եւ հետաքրքրական գիրքը:*

*«Գալիլեայի առաքելութիւնը՝ սկիզբը, որ վախճան եւ վախճան, որ նոր սկիզբը ունեցաւ» աշխատութիւնը, որ կարելի է կոչել «Յարութեան Աւետարան», աւարտւում է հոգեբուխ յիշատակարանով, որտեղ հեղինակը միջնադարեան գրիչների օրինակով Աստծուն խնդրում է յիշել «Տէր Աբէլ Մանուկեան քահանան՝ ամենայետինը եւ նուաստագոյնը Փրկչական Մարմնի ու Արեանդ Խորհուրդով հիմնուած Ս. Եկեղեցիիդ Ուխտի սպասաւորներէն», ուր գրած «Աղօթք եւ փառաբանութիւն»-ը կարող է մեզնից իւրաքանչիւրի համար դառնալ «ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»:*

*Առկայ գրքի մասին մեր գնահատական խօսքն աւարտելուց առաջ, փակագծերում անհրաժեշտ ենք համարում յայտնելու մեր անկեղծ մտահոգութիւնն այն տխուր փաստի վերաբերեալ, թէ ինչո՞ւ են մեր ընտիր հոգեւորականներից շատերը, հէնց մեր եկեղեցում, ենթարկուել ծանր հալածանքների. խօսուն օրինակներ են հանդիսանում՝ Ղազար Փարպեցին, Մովսէս Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Կոմիտաս Վարդապետը եւ այլն: Գուցէ՝ նրանք իրենց հաւատով եւ արդիւնական գործերով վեր էին խոյանում իրենց շրջապատում տիրող խաւարամտութեան մակարդակից: Թւում էր թէ ժամանակներն ու վատ բարքերը փոխուել են. աւա՜ղ, նոյն հալածանքը չի խնայուել նաեւ Տ. Աբէլ քահանային, որը ինչպէս իր նախորդ ստեղծագործութիւնների, նաեւ այս գրքի հրատարակութեան առթիւ տուեց իր միանշանակ պատասխանը եւ հաւատի գերազանց վկայութիւնը՝ բարձր մնալ բռնադատողների միջակութեան մակարդակից՝ լինելով հոգեւոր-բարոյական եւ մտաւոր այն դիրքում, որտեղ պէտք է լինի հայ հոգեւորականը:*

*Մաղթենք, որ քահանայ-աստուածաբան-փիլիսոփայ Տ. Աբէլ քհնյ. Մանուկեանի գրչից նորանոր գրքեր ծնուեն՝ լրացնելու մեր հոգու եւ մտքի սովը, օգնելու մեզ վեր բարձրանալ կենցաղային հոգսերից եւ մեր միտքն ու հայեացքը վեր յառել դէպի երկինք, դէպի աստուածայինն ու բարին:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

## ՄԱՐԴԻԿ ՆՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*Նուրիկեանի՞ն յիշեցնեմ թէ ի՞նչ կու գար... Խէ, Ծա, Կենէն ետք...: Այս պահուս իր գերագոյն տագնապն ու մտահոգութիւնն էր գիտնալ թէ ի՞նչ կու գար... Կենէն ետք:*

*- Ես գիտէի՛ ասիկա, հաւատացէ՛ք գիտէի: Օրիորդ Վարդուհին ինծի տասը խաչ կու տար այբբենգիմիս համար, - անորոշին նայող աչքերը մեզի դարձնելով:*

*Օրիորդ Վարդուհին, ապահովաբար, իննսուն տարի առաջ ծննդավայր Հիւսէյնիկի մանկապարտէզին սիրուն օրիորդն էր, որ ուշիմ Բենիկին տասը խաչ տալով կ'առաջնորդէր զինք որ լեզուն լաւ սիրէ, անով մեծնայ, անով հարուստ վաստակ մը մեզի աւանդէ: Ինչ գիտնար օրիորդ Վարդուհին, ինչ գիտնար խեղճացած Նուրիկեանը՝ ամերիկահայ գրականութեան այս համեստ հսկան, որ ալցհայմըր կամ տիմենշիա հիւանդութիւնները՝ աններող, անզիջող են. Ոչ կը խնայեն վաւերական գրողին, ոչ ալ համեստ ընթերցողին: Անոնք կ'աւլեն, կը տանին ու կը քանդեն յիշողութիւնը մարդու ուղեղէն՝ ցացնող եւ ահաւոր պարապութիւն մը ձգելով ետին:*

*Խէ, Ծա՛, Կեն... ի՞նչ կու գար յետոյ... »:*

*Գեղեցիկ յուշ է սա, գեղեցիկ եւ յուզախառն, որ կարդացւում է գեղարուեստական պատմուածքի հետաքրքրութեամբ:*

*Չի կարելի գնահատութեան խօսք չասել մամուլին նուիրուած մարդու, հրապարակագրի, խմբագրի տքնաջան աշխատանքի մասին, որ Վաչէ Սեմերճեանի պարագայում առանձնապէս չարուեց եւ կորուստը ոչ միայն «Նոր Օր»-ինն էր, այլ ցաւօք եւ յատկապէ՛ս նրա բազմահազար ընթերցողներինը, աշխատանք, որ սովորաբար չի նկատւում, բայց դրա կարեւորութիւնը պէտք է խոստովանել ու գնահատել: Այս գրքի մէջ էլ հէնց տեղ են գտել ժամանակին մամուլում հրապարակուած մի շարք գործեր՝ դիմաքանդակներ, յուշեր՝ գրուած, ինչպէս վերը նշեցինք հեղինակին յատուկ պարզ եւ հանդարտ պատմելաոճով, երբեմն նաեւ մեղմ հումորի պարտադիր միջամտութեամբ: Գեղեցիկ են ե՛ւ գրքի անուանումը, ե՛ւ առանձին վերնագրերը: Հեղինակը գիրքը հիմնականում օժտել է գործիչների երգիծանկարներով, որն էլ իր հերթին իւրօրինակ հմայք է հաղորդում գրքին եւ որոնց ճնշող մեծամասնութեան հեղինակը մեզ բոլորիս քաջ յայտնի տաղանդաշատ գծանկարիչ Մասիս Արարատեանն է: Արուած գործի համար կարելի է երկար խօսել, անվերջ խօսել: Այսուհանդերձ, առաւել հետաքրքիրն, ըստ իս Վաչէ Սեմերճեանի յուշային գրուածքներն են, որովհետեւ դրանց մէջ նա պատմում է բաներ, որ ուրիշները չգիտեն: Հէնց յուշերն էլ յուշում են, որ լաւ կլինի, եթէ կեանքի կենսափորձ ունեցող, շատ բան տեսած, իր ճանապարհին շատ երախտաւորների հանդիպած հեղինակը իր յետագայ տարիները, ի թիւս այլոց, նուիրի նաեւ այս շնորհակալ գործին:*

## ՅԱՋՈՒԱԳԻՒՏ ԱՌԻԹ

*Շարունակուած էջ 14-էն*

*փաթեթաւորուած մատուցել՝ տպաւորութիւն ներգործելու համար, սակայն ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի հետ քայլող եւ նրան ծառայող լռեցի ազգագրագէտի համար դա խորթ է:*

*Մի այլ պատկեր էին Արթուր Շահնազարեանի ներկայացրած երաժշտական օրինակների սեփական կատարումները: Յիշողութիւն, լսողութիւն, հարազատութիւն, բնական հոսք, եւ չկար ժամանակի կորուստ կողմնակի ձեւով երգերը ներկայացնելու համար:*

*Ինչպէս նշեց դասախօսը, նա չէր փորձում վերլուծել հայկական երաժշտութեան մասնագիտական կառոյցը, թէ ինչ օրէնքներով են ստեղծուած դրանք, այլ տալիս էր նրանց ծագման հոգեբանական դրդապատճառները, փիլիսոփայութիւնը, որը եւ պիտի օգնէր հարազատ ոճով մեկնաբանելու մեր ազգային երաժշտական գոհարները:*

*Հետաքրքիր էր եւ նոր:*

## ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔ ԵՒ ՄԵԾԱՐԱՆՔ

*Շարունակուած էջ 15-էն*

*նապետին կողմէ, որոնց հակիրճ կենսագրականներն ալ ընթերցեց Տիկին Թալին Սարաֆօղլուն:*

*Երեսուն տարուայ ծառայողն էր Տիար Միրիճան Կիւրեղեան որ նաեւ մեծարուեցաւ Պոլսահայ Միութեան «Յկեանս Պատուոյ Անդամ»ի յուշատախտակով:*

*Քսան տարի ծառայողներն էին, Տիկնայք՝ Ալին Տօնիկեան, Մարիամ Խաչիկեան եւ Թիլտա Աճիլաչօղլու Մինասեան եւ Տիարք՝ Կիւլպէնկ Մովսէսեան եւ Երուանդ Տօնիկեան:*

*Իսկ տասը տարի ծառայողներն էին, Տիարք՝ Սահակ Թունա, Նուպար Գարաթաշ եւ Տիկին Տիանա Ճանիկ:*

*Ներկաները մեկնեցան իրեց հոգիներուն մէջ դրոշմուած ըլլալով թէ Պոլսահայ Միութեան իսկական ուժը իր անդամներուն միակամութեան եւ պարկեշտութեան մէջ է: Նաեւ այս տօնը օրհնութիւն մըն է, միասնաբար բաժնեկցելու մեր ունեցած բարիքները:*



## «ՏԱՆԳՕ»ՆԵՐԸ ԹԱՆԿՕ ԿԸ ՊԱՐԵՆ...

*Շարունակուած էջ 6–էն*

Հայաստանի կառավարութիւնը այս վաճառքը արդարացուց՝ յայտնելով, որ ներկայ շինութիւնը արդէն չի բաւարարեր Նախարարութեան այժմու պահանջներուն, երբ աճած է անոր անձնակազմը. կարիքը կայ նոր վայրի մը մէջ նոր ու աւելի ընդարձակ նախարարութեան մը վայել շինութեան մը: Ի հարկէ, հիմնական գործօն է նաեւ գանձուելիք խոշոր գումարը, գայթակղեցուցիչ նիւթական եկամուտը, որ կ՛ակնկալուի այս գործարքէն: Եւ ո՞վ կրնայ կռծկել, թէ այս բոլորի ետին պահուըտած չէ նոյնինքն այդ չարաբաստիկ դրամը...

Հետաքրքիր էր քաղաքացիի մը կարծիքը, որ ըսաւ թէ Երեւանի մէջ հիւրանոցի պակաս չկայ, նկատի առնելով արդէն գոյութիւն ունեցող շքեղ հիւրանոցները եւ այն ալ Նախարարութեան շէնքին յարակից Երեւանի կեդրոնական շրջանին մէջ:

Բայց ո՞ւր է խորքային մտահոգութիւնը այս պատմութեան:

1991–ին Հայաստանի անկախութեան հռչակումին զուգահեռ տեղի ունեցաւ արմատական լուրջ փոփոխութիւն մը, որ վրիպեցաւ շատերու աչքերէն: Կտրուկ կերպով շրջուեցաւ երկրին քաղաքատնտեսական վարչաձեւը: Կոմունիզմին (համայնավարութիւն) փոխարինեց քափիթալիզմը (դրամատիրութիւն), որուն դաւանանքն ու կուռքը դրամն է, իշխող ուժը՝ դրամը՝ իր ողջ հզօրութեամբ եւ ճնշիչ միջոցներով: Օրուան իշխանութիւններն ու ժողովուրդը գտնուեցան կատարուած իրողութեան մը առջեւ: Նոր իրավիճակին համահունչ՝ վաճառքի հանուեցան ազգային արժէքներ, ժողովուրդին պատկանող կառոյցներ, 70 տարի ժողովուրդին վաստակով ու քրտինքով կառուցուած գործարաններ, մինչ այդ պետութեան պատկանող հիմնարկներ ու շինութիւններ եւ այլն: Ճարպիկ իշխանաւորներ օգտուելով իրենց լծակներէն ջուրի գինով իւրացուցին զանազան ժողովրդապատկան հիմնարկներ, հանքեր, հիւանդանոցներ, շինութիւններ եւ գոյացաւ նոր վերնախաւ մը (էլիտա), որ այժմ կը կոչուի օլիկարխներ: Ինչպէ՞ս եւ ի՞նչ միջոցներով Երեւանի գինիի եւ կոնեակի գործարանները դարձան այս կամ այն օլիկարխին սեփականութիւնը: Օրինակ՝ ինչպէ՞ս Խոսրով Յարութիւնեան (նախկին վարչապետ ու Ազգային Ժողովի նախկին նախագահ) եւ Յարութիւն Քուշկեան (նախկին նախարար) սեփականատէր դարձան հիւանդանոցներու: Չէ՝ որ 1991–էն առաջ բոլոր քաղաքացիները կ՛ապրէին նոյն տնտեսական վարչաձեւին տակ եւ սկզբունքով յանցագործութիւն էր սեփականութիւններ ունենալը:

Այսպէս, ժողովուրդին կառուցածն ու հարստութիւնը դարձան փոքր խմբակի մը սեփականութիւնը: Գոյացաւ խոր վիհ մը՝ փոքրաթիւ գեր-մեծահարուստներու եւ ժողովուրդին մեծամասնութեան միջեւ: Սա արդէն դրամատիրութեան օրինաչափութիւններէն եւ սկզբունքներէն հեռու գացող երեւոյթ մըն է՝ ալան-թալանի, կեղեքումի, չարաշահումի համազօր. դուք ըսէք՝ վայրագ դրամատիրութիւն: Սակայն, եթէ նկատի առնենք հայ օլիկարխներուն դրսեւորած քաղաքատնտեսական մենաշնորհն ու ակրեսիւ կեցուածքը այլոց նկատմամբ, ապա սա քափիթալիզմին արեւելահայկական տարբերակն է՝ անգթութեամբ եւ անողոքութեամբ համեմուած...

Ներ-հայաստանեան նորաբոյս օլիկարխներուն հետ մրցավազքի մէջ մտան արտասահմանեան զանազան ընկերութիւններ, որոնք ներխուժելով Հայաստան իրենց թաթը դրին ժողովուրդին պատկանող տարբեր կառոյցներու վրայ: Անոնք օգտուելով Հայաստանի տնտեսական թոյլ վիճակէն, սեփականացուցին ազգին պատկանող եւ խորհրդային օրերուն ժողովուրդին բազուկով կերտուած կառոյցներ, ըսելով՝ որ ներդրումներ կը կատարեն, աշխատատեղիներ կը ստեղծեն, չբանող գործարաններ կեանքի կը կոչեն: Այսինքն՝ բարիք կ՛ընեն...: Սակայն սա արտասահմանեան քափիթալիզմին զաւթումն է ազգային հարստութեանց:

Ո՞ւր է ելքը:

Ի հարկէ՝ համակարգի փոփոխութիւն, երբ ժողովուրդը կ՛ըլլայ իր հայրենիքին, իր վաստակին ու հողին տէրը: Հայրենիքը ու ազգապատկան հարստութիւնները կը պատկանին ազգի իւրաքանչիւր անհատին, որ 70 տարիներ աշխատած է կայուն եւ ապահով կեանքի համար: Սոցիալիզմը (ընկերվարութիւն) այս կը քարոզէ՝ պետութիւնն ու ազգային հարստութիւնները դարձնել ժողովրդապատկան, հաստատել հաւասարութեան սկզբունքը եւ վերջ տալ փոքրաթիւ օլիկարխներու անզուսպ տիրակալութեան: Ընկերվարութիւնը իրաւազուրկին եւ ճնշեալին, շահագործուողին եւ արդարին գաղափարախօսական զէնքն է:

Մինչ այդ, «Տանգօ»ն վերջին օրինակն է, որ կու գայ Հայաստան քափիթալիստական իր թանկօն պարելու՝ իր լիառատ գրպանով եւ պարընկեր ունենալով Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան շէնքը վաճառքի հանած կառավարութիւնը. իսկ ոտքին տակ՝ ժողովուրդին վաստակն ու բարոյականը:

Բարի վայելք «Տանգօ»-ի հինգ-աստղանի հիւրանոցի յաճախորդներուն եւ շնորհաւորութիւններ նոր հաւաքատեղի ու աշխատատեղիներ ձեռք ձգած Երեւանի պերճաղիճներուն:

Եթէ չփոխուի Հայաստանի համակարգը, դեռ շատ «Տանգօ»ներ թանկօ պիտի պարեն եւ այն ալ՝ սանձարձակօրէն:

## «ԺՊԻՏՆԵՐԸ ԵՐԵՍՆԵՐԻՆ ՃԱԿԱՏ ԳՆԱՑԻՆ...»

*Շարունակուած էջ 8–էն*

ութիւնը հայրենիքի փրկութեան եւ ազատութեան, ցեղասպանութեան ճանաչման, հայութեան գոյատեւման ու հայապահպանման համար ծառայութիւնները առաքել էր սրբատառ կոնդակը, որը եկեղեցու բեմից ընթերցուեց տէր Խաժակի միջոցով եւ ապա յանձնուեց ղեկավարութեան ատենապետ՝ պրն. Սեդրաք Աճէմեանին:

Պարգեւ սրբազանը իր քարոզում անդրադարձաւ Արցախի ազատագրութեան համար մղուած հերոսական կռիւներին, զոհաբերութիւններին, ներկայիս երկիրը շէնացնելու աշխատանքներին, ուշադրութեան յանձնելով այն որ միասնականութեամբ զօրավիգ կանգնելու մեր երկու պետութիւնների հզօրացման եւ բարգաւաճ կեանքին: Սրբազանը շնորհաւորեց Հնչակեան կուսակցութեան եւ յիշեցրեց նաեւ օգնել Սուրիահայութեան:

Հոգեհանգստեան արարողութեան ընթացքում նաեւ յիշատակուեցին Հնչակեան կուսակցութեան բոլոր նահատակները: Մտերմիկ հիւրասիրութեան–հոգեճաշի սեղան էր պատրաստուել ի յիշատակ նրանց:

Հնչակեան կուսակցութեան 125 ամեակի եզրափակիչ հանդիսութիւնը կայացաւ նոյն օրը, երեկոյեան, Գլենդէյլի հայ սքուլում խուռներամ ժողովրդի ներկայութեամբ, մասնակցում էին Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս՝ Գրիգոր Յովհաննիսեանը, Յովնան սրբազան առաջնորդը, Հայաստանի ժառանգութեան կուսակցութեան նախագահ՝ Րաֆֆի Յովհաննիսեանը, հոգեւոր հայրեր, համայնքային եւ կուսակցութիւնների ներկայացուցիչներ:

Ճոխ եւ ընդգրկուն յայտագիր գործադրուեց: Հանդիսութեան դերակատարները կատարեցին իրենց լաւագոյնը հանդիսականներին բուռն խանդավարելով եւ ոգեւորելով, ելոյթները չափուած ու կշռուած, իրականութեան չափաւորութեան շրջանակներում: Հոգեբուխ, հոգեզմայլ, յուզախառն հոյակապ հանդիսութիւն, փայլեցին բոլոր բեմ բարձրացողները՝ բանախօսը, ելոյթ ունեցողները, երգիչները, պարողները, նուագիչները, հանդիսավարը եւ ասմունքողը, ամէն բառ ու շարժում հայերէնով: Պարտական եմ զգում յիշելու երկու լաւագոյն անձերի անունները՝ Թագուհի Արգումանեանը եւ Անի Սարաֆեան–Եփրեմեանը: Երեք ժամերից աւելի հանդիսութիւնը մեծ հաճոյքով առանց որեւէ դոյզն իսկ յոգնութեան ըմբոշխնեցի, վստահ եմ, որ հանդիսականն էլ նոյնպէս , շատ ապրեն հանդիսութեան կազմակերպիչները եւ դերակատարները, բռաւօ իրենց, հազար անգամ վարձքները կատար:

** Պարգեւ Սրբազանի քարոզից խօսք*

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

www.massisweekly.com
updated every Friday

LIQUIDATION SALE!
Gianni Ladies Fashion
LATEST EUROPEAN STYLES
50-75% OFF ENTIRE STORE
Everyday Dresses • Evening Gowns
Accessories • Shoes • Belts






Store Closing...
Everything Must Go!
6412 Hollywood Blvd.
Los Angeles, CA 90028
(323) 462-2090